




Ecoline  
International

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ (ՇՄՍԱԳ)

## ՍԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ (ՐՅՈՒՄԻՍ-ՅԱՐԱԿ ՄԻՋԱՆՑՔ) ՃԱՆԱՊԱՐՅԱՅԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

### Հատոր 5. Գոլմարային ազդեցության գնահատում



Աղբյուր՝ նկարները Սիսիան-Քաջարան առաջարկվող ճանապարհի 3D հոլովակից, ճանապարհային դեպարտամենտ, 2022 [<https://www.youtube.com/watch?v=fu-dgAwjSsU>]

**Օգոստոս 2024**

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՇՄՍԱԳ)

## ՄԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ (ՐՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ) ՃԱՆԱԴԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

### Հատոր 5. Գոլմարային ազդեցության գնահատում

#### Մշակված է



Ecoline  
International

Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ  
(Սոֆիա, Բուլղարիա)



SE SOLUTIONS  
Advancing Environmental Sustainability

ՍԻ Ի Սոյուզնա ՍՊԸ (ՀԱՀ)  
Տնօրեն. Շոն Օ Բեյրն  
Հեռ. +27 (0)12 643 0190  
+27 (0)82 903 9751  
Էլ.փոստ.  
[sobeirne@tiscali.co.za](mailto:sobeirne@tiscali.co.za)



ATMS Solutions

ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնա ՍՊԸ  
(Երևան, Հայաստան)  
Տնօրեն. Արտակ Տեր-Թորոսյան  
Հեռ. +37491 497128  
+37499 109495  
Էլ.փոստ.  
[artak.ter-torosyan@atms.am](mailto:artak.ter-torosyan@atms.am)



Տնօրեն. Մայա Գաչեչիլադե-  
Բոժեսկու  
Հեռ. +380 951 100 727 /  
+ 359 876 63 0522

Էլ.փոստ.  
[mgachechiladze@ecoline-int.org](mailto:mgachechiladze@ecoline-int.org)

#### Մշակված է:

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային  
դեպարտամենտ» հիմնադրամի համար

© Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, 2024

Բոլոր իրավունքները պահպանված են:  
Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի օգտագործումը  
կարող է կատարվել միայն հղում անելով սկզբնաղբյուրին:

## ՓԱՏԱՂԹԹԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

Տարբերակ	Մշակված է	Ստուգված է	Հրապարակված է	Հրապարակման ամսաթիվը	Նկարագիրը
1	ՇՄՍԱԳ խորհրդատուի փորձագետների խումբ (կազմը թվարկված է ՇՄՍԱԳ-ի Հատոր 1-ում)	Մայա Գաչեչիլադե-Բոժենկու  Շոն Օ Բեյրն Արտակ Տեր-Թորոյան	Մայա Գաչեչիլադե-Բոժենկու	22.05.2023	Վարկատուների և պատվիրատուի վերանայման տարբերակ
2				29.06.2023	Վերջնական տարբերակ վարկատուների և պատվիրատուի հաստատման, հայերեն թարգմանության և հրապարակման համար
3				06.02.2024	Վերջնական հաշվետվություն՝ վերանայված հրապարակման փուլից հետո
4	Վերանայվել է Մայա Գաչեչիլադե-Բոժենկուի կողմից	Շոն Օ Բեյրն	Մայա Գաչեչիլադե-Բոժենկու	12.08.2024	Վերանայված տարբերակ ԱԶԲ-ի համար

### Պատասխանատվությունից ազատումը

Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատումը (ՇՄՍԱԳ) հիմնված է կանխատեսումների վրա, քանի որ այն ավարտվում է նախքան գնահատման ենթակա հանդիսացող ծրագրի իրականացումը: Տեղեկատվությունը, որի վրա հիմնված է գնահատումը, ստացվում է բազմաթիվ աղբյուրներից, ներառյալ տեխնիկատնտեսական հիմնավորումը, մանրամասն նախագծային փաստաթուղթը, ուսումնասիրությունների հաշվետվությունները, որոնք իրականացվել են տեխնիկատնտեսական հիմնավորման շրջանակներում, հանդիպումների գրառումները, այլ հրապարակումները, տարբեր տվյալների բազաները, ինչպես նաև ՇՄՍԱԳ խմբի կողմից հավաքագրված նյութերը, չհաստատված և այլ տեղեկություններ: Չափազանց դժվար է հաստատել այն տեղեկատվությունը, որն անտրամաբանական է: Սույն փաստաթղթի մշակման ընթացքում մեծ աշխատանք է կատարվել ապահովելու համար, որ առկա բոլոր տեղեկությունները ճշգրտորեն վերարտադրվեն ՇՄՍԱԳ-ում: Եթե սույն փաստաթղթում առկա է տեղեկատվություն, որը սխալ է, խնդրում ենք դրա վերաբերյալ մեկնաբանություններ կատարվեն, որի հիման վրա կթարմացվի ՇՄՍԱԳ-ը: Մենք պատասխանատվություն չենք կրում այն տեղեկատվության համար, որը մենք բարեխղճորեն ընդունել և օգտագործել ենք՝ չիմանալով, որ այն թերի կամ սխալ է: Յուրաքանչյուր ոք, ով վերարտադրում է այս ՇՄՍԱԳ-ում առկա տեղեկատվությունը, դա անում է բացառապես իր ռիսկով:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳ	Ազդեցության Գոտի
ԿՄՊ	Կենսաբազմազանության Միջոցառումների Պլան
ՄԺ	Մշակութային Ժառանգություն
ԳԱԳ	Գումարային Ազդեցության Գնահատում
ՓԲԸ	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ԲԱՍ	Բնապահպանական և Սոցիալական
ՇՄԱԳ	Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում
ԲՍՄՊ	Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան
ԲՍԿՊ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
ՇՄՍԱԳ	Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցություն Գնահատում
ԿԹՏ	Կարևոր Թռչնադիտական Տարածք
ՄՖԿ	Միջազգային Ֆինանսական Կորպորացիա
ՄՖՀ	Միջազգային Ֆինանսական Հաստատություններ (Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկ, Ասիական Չարգացման Բանկ և Եվրոպական Ներդրումային Բանկ)
ԿԿՏ	Կարևոր Կենսաբազմազանության Տարածք
ՇՄԼ	Շրջակա Միջավայրի Նախարարություն
NB	Նշում
ՀՀՃՄ	Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցք
ՈՏԱ	Ոչ-Տեխնիկական Ամփոփագիր
ԱԱ	Աշխատանքի Անվտանգություն
ՏՇ	Տարաբնակեցման Շրջանակ
ԿԱՀ	Կենսաբազմազանության Առաջնահերթ Հատկանիշ
ՇՆՊ	Շահառուների Ներգրավվածության Պլան
ԱԲԲ	Արժեքավոր Բնապահպանական (և Սոցիալական) Բաղադրիչ
ՉՊՍԿ	Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	5
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
2 ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ .....	6
2.1 Ներածություն .....	6
2.2 Նախնական գնահատման Փուլ I՝ ԱԲԲ և տարածական ու ժամանակային սահմանների որոշում .....	8
2.3 Նախնական գնահատման Փուլ II՝ որոշում այլ գործունեությունները (Ծրագրերը) ԳԱԳ-ում ներառելու համար .....	10
2.4 Փուլեր 4 և 5՝ ԱԲԲ վրա գումարային ազդեցության նշանակալիության գնահատում ....	18
2.5 Փուլ 6՝ Գումարային ազդեցությունների կառավարում .....	30

## ԱՐՅՈՒՄԱԿՆԵՐԻ ԵՎ ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Ծրագրերի վերլուծությունը, որոնք կարող են ավանդ ունենալ ԱԲԲ-երի վրա գումարային ազդեցությունում.....	11
Աղյուսակ 2. ԳԱԳ համար ընդունված ԱԱԲ զգայնությունը.....	18
Աղյուսակ 3. ԱԲԲ-երի վրա հնարավոր գումարային ազդեցության գնահատումը .....	19
Նկար 1. Զարտեգ, որտեղ ցույց են տրված ` i) Ողջի պոչամբարը, ii) կետը, որտեղ միանում են նախատեսված Սիսիան-Քաջարան և Քաջարան-Ագարակ ճանապարհները, և iii) Փխրութի պոչամբարը.....	15
Նկար 2. Զարտեգ, որը ցույց է տալիս ՉՊՄԿ արդյունաբերական ջրամատակարարման խողովակաշարի նախնական կերպով ենթադրվող ուղին Ծրագրի նկատմամբ .....	16
Նկար 3. Զարտեգ, որը ցույց է տալիս առաջարկվող՝ Սիսիանի բազալտի հանքի տեղադիրքը Իշխանասար գյուղի, Ծրագրի ճանապարհի և ուղեբաժանի նկատմամբ .....	16
Նկար 4. Զարտեգ, որը ցույց է տալիս Դարպաս և Լոր գյուղերի տեղադիրքերը Ծրագրի ճանապարհի նկատմամբ .....	17

## ՆԱԽԱԲԱՆ

Այս փաստաթուղթը ներկայացնում է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի առաջարկվող գրոյից կառուցվող Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածի (Ծրագիր) գումարային գնահատման ազդեցության հաշվետվությունը: Այն հանդիսանում է Ծրագրի Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության **Հատոր 5**-ը:

ՇՄԱԳ հաշվետվությունը բաղկացած է համապատասխան հավելվածներով հետևյալ հատորներից՝

- Հատոր 1 - Ծրագրի սահմանումը, ներառյալ Ծրագրի ներկայացումը, ենթատեքստը և հիմնավորումը, Ծրագրի նկարագիրը, այլընտրանքները, իրավական շրջանակը և ՇՄԱԳ մեթոդակարգը (սույն Հաշվետվությունը),
- Հատոր 2 - Կենսաբազմազանությունը, ներառյալ ելակետային վիճակի վերլուծությունը, ռիսկերը / ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- Հատոր 3 - Ֆիզիկական միջավայրը, ներառյալ օդի որակի ու կլիմայի, աղմուկի ու թրթռման, լանդշաֆտի և այլնի ելակետային իրավիճակը, ռիսկերը / ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- Հատոր 4 - Սոցիալական միջավայրը, ներառյալ սոցիալ-տնտեսական, գենդերային և պատմամշակութային ելակետային իրավիճակը, ռիսկերը / ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- **Հատոր 5 - Գումարային ազդեցության գնահատումը (սույն Հաշվետվությունը),**
- Հատոր 6 - Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանը (ԲՍԿ), և
- Հատոր 7 - Եզրակացությունները և առաջարկությունները:

ՇՄԱԳ-ը հրապարակվել է 120 օրվա ընթացքում՝ միջազգային վարկատուների պահանջներին համապատասխան (Հուլիսի 21-ից մինչև Դեկտեմբերի 1-ը 2023թ): Ի լրումն ՇՄԱԳ հաշվետվության, հրապարակման փաթեթը ներառում է

- Ոչ Տեխնիկական Ամփոփագիր (ՈՏԱ), որը ՇՄԱԳ-ի արդյունքները ոչ տեխնիկական լեզվով հակիրճ և համապարփակ ներկայացնող փաստաթուղթ է,
- Շահառուների Ներգրավման Պլան (ՇՆՊ), որն ուղղորդում է տեղեկատվության հրապարակումը և Ծրագրի շահագրգիռ կողմերի հետ բովանդակային ներգրավվածությունը, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմը,
- Տարաբնակեցման Շրջանակ (ՏՇ), որն ուղղորդում է Ծրագրի հետևանքով ֆիզիկական և տնտեսական տեղաշարժի, հողի ձեռքբերման, փոխհատուցումների և ապրուստի միջոցների վերականգնման հետ կապված հարցերը,
- Կենսաբազմազանության Միջոցառումների Պլան (ԿՄՊ), որը հստակեցնում է այն գործողությունները, որոնք կարող են օգնել ապահովել հատուկ պահպանման արժեք համարվող պոտենցիալ ազդեցության ենթարկված կենսամիջավայրերի և տեսակների պահպանումը կամ բարելավումը,
- Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան (ԲՍՄՊ), որը պարունակում է Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գործողություններ՝ միջազգային վարկատուների պահանջներին համապատասխան:

Հրապարակմանը հաջորդող ՇՄԱԳ հրապարակման և խորհրդակցությունների հաշվետվությունը մշակվել է ամփոփելու և փաստաթղթավորելու համար հրապարակման փուլում շահագրգիռ կողմերից և նրանց ներգրավման գործողություններից ստացված արձագանքը:

ՇՄԱԳ փաթեթը վերանայվել է հաշվի առնելով ՇՄԱԳ-ի հրապարակման ընթացքում հավաքագրված շահագրգիռ կողմերի արձագանքը և վերահրապարակվել է ՇՄԱԳ հրապարակման և խորհրդակցությունների հաշվետվության հետ միասին, Ծրագրի կենսափուլերի համար՝ տեղադրվելով ՀՀ Ճանապարհային Դեպարտամենտի (ԾԴ) և

Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) կայքերում<sup>1</sup> 2024 թվականի ապրիլին<sup>1</sup>: Ծրագրի պլանավորման ընթացքում որոշվել է Սիսիան-Քաջարան ճանապարհը կառուցման աշխատանքները բաժանել երեք շինարարական փաթեթների<sup>2</sup>.

- Լոտ 1 - Հյուսիսային հատված՝ 27.1 կմ երկարությամբ (0+000 կմ-ից մինչև 27+104 կմ),
- Լոտ 2 - Բարգուշատի թունել՝ 8.64 կմ երկարությամբ (27+104 կմ-ից մինչև 35+770 կմ), և
- Լոտ 3 - Հարավային հատված՝ 24.2 կմ երկարությամբ (35+770 կմ-ից մինչև 60+022 կմ):

Ասիական Չարգացման Բանկը (ԱՉԲ) դիտարկում է Լոտ 1-ի՝ Հյուսիսային ճանապարհահատվածի կառուցման ֆինանսավորումը Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ) համաֆինանսավորմամբ: Լոտ 3-ի Հարավային ճանապարհահատվածը նախատեսում է ֆինանսավորել ՎԶԵԲ-ը՝ ԵՆԲ համաֆինանսավորմամբ: Լոտ 2-ը՝ Բարգուշատի թունելը նախատեսում է ֆինանսավորել ՀՀ կառավարությունը այլ միջազգային դոնորների հետ համատեղ:

Հետևելով ԱՉԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի պահանջներին՝ Ա կատեգորիայի բնապահպանական ծրագրերի համար, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների նախագծերը, ներառյալ շրջակա միջավայրի կառավարման պլանները, պետք է հրապարակվեն ԱՉԲ-ի և կառավարության կողմից նվազագույնը 120 օր առաջ մինչև ԱՉԲ-ի խորհրդի նիստը: Հետևաբար, ԱՉԲ-ն նախաձեռնել է ՇՄՍԱԳ փաթեթի 120-օրյա հրապարակումը, ներառյալ սույն Հատոր 5-ը:

## 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը (ՇՄՍԱԳ-ի Հատոր 5-ը) պարունակում է Ծրագրի և տարածաշրջանում այլ նախագծերի հնարավոր գումարային ազդեցությունների վերլուծությունը: Որտեղ կանխատեսվել են պոտենցիալ բացասական ազդեցություններ, ներկայացվում են մեղմացման, իսկ դրական ազդեցությունների համար առաջարկվում են բարելավման միջոցառումներ: Այդ մեղմացման և բարելավման միջոցառումները ներառված են Ծրագրի Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանում (ԲՍԿՊ) (ՇՄՍԱԳ-ի Հատոր 6-ը):

## 2 ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 2.1 Ներածություն

Սույն բաժինը պարունակում է Գումարային Ազդեցության Գնահատումը (ԳԱԳ), այսինքն Ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությունները դիտարկվում են Ծրագրի Ազդեցության Գոտում իրականացվող կամ ոչ հեռու ապագայում իրականացվելիք այլ ծրագրերի կամ գործունեությունների արդյունքում հնարավոր ազդեցությունների հետ զուգակցված կերպով: ԳԱԳ-ը ներառում է ծրագրեր / գործունեություններ, որոնց

<sup>1</sup> Հղումը ճՂ-ի կայքին՝ [https://armroad.am/en/news/inner/News\\_04.04.2024\\_4](https://armroad.am/en/news/inner/News_04.04.2024_4), հղում ՎԶԵԲ-ի կայքին՝ <https://www.ebrd.com/work-with-us/projects/esia/northsouth-corridor-sisiankajaran-road-project.html>

<sup>2</sup> Նշված երկարությունները նախնական են: Հատվածների վերջնական երկարությունները կորոշվեն մանրամասն նախագծման արդյունքում: Ակնկալվում է, որ քանի դեռ Բարգուշատի թունելի երկարությունը մնում է անփոփոխ, պորտալների մոտ դրան կավելացվի մի քանի կիլոմետր՝ այդպիսով նվազեցնելով հյուսիսային և հարավային հատվածների երկարությունները



վերաբերյալ առկա է հանրությանը հասանելի բավարար տեղեկատվություն, որպեսզի որոշվի ժամանակի և տարածության մեջ դրանց փոխադարձ կապը Ծրագրի հետ և գնահատվի գումարային ազդեցությունների հնարավորությունը: ԳԱԳ-ը ներառում է նաև բնական միջավայրի հետ կապված և արտաքին սոցիալական գործոններ, որոնք կարող են բացասաբար ազդել Ծրագրի ազդեցությունը կրող բնապահպանական ու սոցիալական ընկալիչների վրա:

Գումարային ազդեցությունները սահմանվում են որպես ազդեցություններ, որոնք առաջանում են որևէ ծրագրի հաջորդական, կուտակվող և/կամ համատեղված ազդեցությունների պատճառով, երբ դրանք ավելանում են այլ՝ նախկինում իրականացված<sup>3</sup>, ընթացիկ և/կամ հիմնավորված կերպով կանխատեսելի ապագա ծրագրերին: Գումարային ազդեցություններ կարող են տեղի ունենալ ազդեցության տարբեր մեխանիզմների պատճառով: Օրինակ՝ միասնական ազդեցությունները կարող են տեղի ունենալ, երբ տարբեր ծրագրերի համանման ազդեցությունները միավորվում են և բնապահպանական կամ սոցիալական միևնույն ընկալիչի վրա առաջացնում կուտակային ազդեցություն, միևնույն սիներգիկ (համատեղ գործող) ազդեցությունները կարող են տեղի ունենալ, երբ տարբեր ծրագրերի տարբեր ազդեցություններ փոխազդում են և բնապահպանական կամ սոցիալական միևնույն ընկալիչի վրա առաջացնում համատեղ ազդեցություն, որն ավելի մեծ է, քան առանձին մասերի ազդեցությունների պարզ գումարը:

ԳԱԳ մեթոդաբանությունը հիմնվում է հաջորդական մոտարկումների գործընթացի վրա, որը նկարագրված է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (ՄՖԿ) «Գումարային Ազդեցության գնահատում և Կառավարում: Ուղեցույցեր Նոր Ձևավորվող Շուկաներում Մասնավոր Հատվածի համար (2013)<sup>4</sup>» փաստաթղթում և համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա որոշ պետական և մասնավոր ծրագրերի ազդեցությունների գնահատման վերաբերյալ» ԵՄ 85/337/EEC Ղեկավար շրջաբերականի (1985, լրացումներով հանդերձ) պահանջներին: ՄՖԿ ուղեցույցերի համաձայն, ԳԱԳ-ն իրականացվում է վեց փուլով.

- Փուլ 1 (Նախնական գնահատման փուլ I)՝ արժեքավոր բնապահպանական (և սոցիալական) բաղադրիչների (ԱԲԲ), տարածական ու ժամանակային սահմանների որոշում:
- Փուլ 2 (Նախնական գնահատման փուլ II)՝ ԳԱԳ -ում ներառելու նպատակով այլ ծրագրերի բացահայտում:
- Փուլ 3՝ Բացահայտված ԱԲԲ վերաբերյալ հիմնական տեղեկությունների հավաքագրում (այս տեղեկատվությունը ներկայացված է ՇՄՍԳ-ի Հատոր 2-ում (Կենսաբազմազանություն), 3-ում (Ֆիզիկական միջավայր) և 4-ում (Սոցիալական միջավայր) և սույն հաշվետվությունում չի կրկնվում):
- Փուլ 4՝ Բացահայտված (սահմանված) ԱԲԲ -երի համար գումարային ազդեցությունների գնահատում:
- Փուլ 5՝ Կանխատեսվող գումարային ազդեցությունների նշանակալիության գնահատում, և
- Փուլ 6՝ Գումարային ազդեցությունների կառավարում:

Հնարավոր գումարային ազդեցությունների գնահատումը քանակական է, որը հիմնվում է բնապահպանական և սոցիալական հարցերով Խորհրդատուի փորձագիտական դատողության վրա՝ ազդեցությունների նշանակալիության չափորոշիչների կիրառմամբ:

<sup>3</sup> Ընթացիկ ԳԱԳ-ում նշված՝ նախկինում իրականացված ծրագրերը դրանք մշտական (չդադարող) ազդեցություն թողնող ծրագրերն են, որոնք կարող են բացասաբար ազդել Ծրագրի տարածքում բնական և սոցիալական միջավայրի վրա:

<sup>4</sup> [https://www.ifc.org/wps/wcm/connect/topics\\_ext\\_content/ifc\\_external\\_corporate\\_site/sustainability-at-ifc/publications/publications\\_handbook\\_cumulativeimpactassessment](https://www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/sustainability-at-ifc/publications/publications_handbook_cumulativeimpactassessment).



## 2.2 Լախնական գնահատման Փուլ I` ԱԲԲ և տարածական ու ժամանակային սահմանների որոշում

ԱԲԲ-երը սահմանվում են որպես «ազդեցությունների վերջնական ստացողներ» (ՄՖԿ, 2013): Այս ԳԱԳ-ի համար ԱԲԲ-երը համեմատվում են բնապահպանական և սոցիալական զգայուն ընկալիչների հետ, որոնք կարող են կրել Ծրագրի ազդեցությունը և սահմանված են ՇՄՍԱԳ Հատորներ 2-ում, 3-ում և 4-ում:

Գումարային ազդեցությունների համար առավել բարձր հավանականություն առկա կլինի այնպիսի ԱԲԲ-երի նկատմամբ, որոնց վրա ազդեցությունը մեղմացման միջոցառումների իրականացումից հետո կարող է գերազանցել անտեսելի նշանակալիության շեմերը<sup>5</sup>: ՇՄՍԱԳ շրջանակում դրանք փոքրից մինչև չափավոր բացասական մնացորդային նշանակություն և փոքրից մինչև զգալի դրական մնացորդային նշանակություն ունեցող ազդեցություններն են: Ծրագրի արդյունքում զգալի բացասական մնացորդային նշանակություն ունեցող ազդեցություններ չեն ակնկալվում:

ԳԱԳ-ի համար սահմանված հիմնական ԱԲԲ-երը հետևյալներն են.

- Տեղական համայնքները (բնակչությունը), նկատի առնելով՝ ա) ազդեցությունները բնակչության առողջության վրա օդի աղտոտման և աղմուկի պատճառով, և բ) համայնքի բնակչության առողջությանը սպառնացող ռիսկի գործոնները՝ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների (վթարների) հետ,
- Ճանապարհներից օգտվողները, նկատի առնելով՝ ա) տարածաշրջանի ճանապարհային հաղորդակցության հնարավորությունների բարձրացումը և դրսից տվյալ շրջան մուտքի հնարավորության ընդլայնումը, բ) ճանապարհային անվտանգությունը,
- Ծրագրում ներգրավված աշխատողները, նկատի առնելով՝ ա) օդի աղտոտման և աղմուկի բարձր մակարդակների ազդեցությանը ենթարկվելը, և բ) աշխատողների անվտանգությանը սպառնացող վտանգները՝ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների (վթարների) հետ,
- Կենսաբազմազանությունը, նկատի առնելով՝ ա) ազդեցությունները տեսակների և դրանց բնական կենսամիջավայրերի վրա, այդ թվում՝ բնակչության միջավայրի ոչնչացումը Կրիտիկական Կենսամիջավայրերի ներսում կամ Կենսաբազմազանության Առաջնահերթ Հատկանիշների (ԿԱՀ) առումով, և բ) ազդեցությունները պետական արգելոցների (ազգային պարկերի), «Emerald ցանցի» տարածքների, ԿԿՏ-ների/ԿԹՏ-ների վրա,
- Հողային պաշարները (հողօգտագործումը և գյուղատնտեսական գործունեությունը),
- Բնահողը՝ հողի բերրի շերտի խախտման և հողերի աղտոտման տեսանկյունից,
- Գրունտային ջրի պաշարները (գրունտային ջրերի առկայությունը և որակը),
- Հանրային ենթակառուցվածքները՝ ա) առողջապահական հիմնարկները Ծրագրի տարածաշրջանում, և բ) սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտները (ուսումնակրթական, առողջապահական, հանգստի/վերականգնողական և այլն)<sup>6</sup> Ծրագրի նպատակներով օգտագործվող տրանսպորտային ճանապարհների երկայնքով,
- Տեղանքը (լանդշաֆտը),

<sup>5</sup> Սա համահունչ է ՄՖԿ Ուղեցույցերում նշված սկզբունքին, որն առաջարկում է ԱԲԲ -երը սահմանել՝ հիմնվելով, մասնավորապես այն նկատառման (հանգամանքի) վրա, թե եակա՞ն է արդյոք ծրագրի հավելյալ ավանդը գումարային ազդեցություններում

<sup>6</sup> Նման օբյեկտների թվում են՝ դպրոցները, մանկապարտեզները, բուժհիմնարկները, սպորտային, մշակութային և զվարճանքի կենտրոնները, վարչական շինություններն ու հանրային վայրերը, եկեղեցիներն ու գերեզմանատները

- Նյութական մշակութային ժառանգությունը (ՄԺ), նկատի առնելով՝ ա) հնարավոր ֆիզիկական վնասվածքի պատճառումը նյութական ՄԺ օբյեկտներին ու պաշարներին, այդ թվում՝ շինարարական աշխատանքների կատարման և տրանսպորտային միջոցների շարժման թրթռումների կողմից առաջացող վնասը (ինչպես կառուցման, այնպես էլ շահագործման փուլում), բ) ֆիզիկապես չվնասված տարածքներին հասանելիության հնարավոր սահմանափակումները, և գ) դեռևս չբացահայտված ՄԺ ակտիվների ոչնչացումը կամ վնասումը,
- Ոչ նյութական մշակութային ժառանգությունը,
- Չբաղվածությունը և աշխատաշուկաները (համայնքային և տեղական մակարդակով), և
- Տևտեսությունը:

Քետեյալ ԱԲԲ-երը **դուրս են մնացել** ԳԱԳ շրջանակից, քանզի կանխատեսվել է, որ դրանց վրա Ծրագրի ազդեցությունների մնացորդային նշանակալիությունը շեմից ցածր (չնչին) կլինի.

- Մակերևութային ջրերի պաշարները,
- Ծրագրի տարածաշրջանում գոյություն ունեցող ճանապարհները, և
- Գոյություն ունեցող այլ ենթակառուցվածքները՝ ա) Էներգամատակարարման ենթակառուցվածքները, բ) թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման վայրերը (օբյեկտները), գ) ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը, դ) գծային ենթակառուցվածքները, որոնց վերաբերյալ հայտնի է, որ դրանք խոչընդոտ կհանդիսանան առաջարկվող ճանապարհի ուղեգոտու համար (գազատար խողովակագծեր, ոռոգման ջրի խողովակաշար, էլեկտրահաղորդման երկու օդային գծեր), և ե) հեռահաղորդակցային, էլեկտրական և այլ ստորգետնյա մալուխներ, որոնք հնարավոր է տրամախաչվեն առաջարկվող ճանապարհի ուղեգոտու հետ:

Մթնոլորտային օդի որակը<sup>7</sup>, աղմուկի և թրթռման մակարդակներն՝ ըստ Էության, չեն դիտարկվում որպես առանձին ԱԲԲ-ներ, այլ ավելի շուտ համարվում են հնարավոր ռիսկեր՝ ա) տեղի բնակչության/համայնքի առողջության, բ) ծրագրում ներգրավվածների և նրանց աշխատանքի անվտանգության, և գ) պատմամշակութային ժառանգության և սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների համար:

Ելակետային բնական և ֆիզիկական բնույթի բնապահպանական մտահոգությունները բացահայտվել են շահառուների ներգրավման միջոցով և ստուգվել են ընթացիկ ԳԱԳ-ում ներառելու նպատակով՝ որպես հնարավոր ԲևՍ ռիսկեր կամ հնարավոր ԱԲԲ-ներ.

- Էրոզիան Դարպասում. սա գյուղում միանգամայն տեղայնացված գործընթաց է, Էրոզիան ավելի լայն տեսանկյունից դիտարկվում է ՇՄՍԱԳ-ի հետ և ընդունվում որպես հողի վրա ազդող ԱԲԲ,
- Ռադիոակտիվությունը Լեռնաձորի տարածքում. սա ուսումնասիրվել է Լեռնաձորի վարչական ղեկավարի հետ միասին՝ նախնական գնահատման հարցերով խորհրդակցություններից հետո, որն ըստ երևույթին կապված է Քաջարանի հանքավայրերի հետ: ՇՄՍԱԳ խորհրդատուի բնապահպանական հարցերով փորձագետի և Լեռնաձորի վարչական ղեկավարի տեղամաս կատարած համատեղ այցի արդյունքում հաստատվել է, որ հանքավայրերը

<sup>7</sup> Ընդունված է, որ կան մի քանի կետեր, որտեղ կտրամախաչվեն առաջարկվող և արդեն գոյություն ունեցող ճանապարհները, այդպիսով առաջացնելով ծխագազերի գումարային արտանետումների հնարավորություն: Այնուամենայնիվ, չի ակնկալվում, որ նման արտանետումները զգալիորեն կավելացնեն Ծրագրի արտանետումների մակարդակը՝ հատկապես նկատի առնելով, որ կառուցման աշխատանքների համար պայմանների ստեղծման նպատակով տեղական տրանսպորտային երթևեկության ուղղությունը վերափոխվելու է շինարարության կազմակերպման և ճանապարհային երթևեկության կառավարման պլաններին համապատասխան:

գտնվում են առաջարկվող ճանապարհից մոտավորապես 6 կմ հեռավորության վրա և փոխներգործություն չի ակնկալվում, հետևաբար խնդիրը փակվել է: Ուստի այս հարցը՝ որպես անտեղի, դուրս է մնացել ՇՄԱԳ շրջանակից, այդպիսով հաշվի չառնվելով ԳԱԳ-ում,

- Ծրագրի ճանապարհային պաստառների (ուղեգոտիների) տրամախաչումը գազատար և ոռոգման ջրի գոյություն ունեցող խողովակազծերի (խողովակաշարերի) հետ. սա կարող էր ազդեցություն ունենալ հանրային ենթակառուցվածք ԱԲԲ-ի վրա, ուստի ներառվել է ԳԱԳ շրջանակում,
- Օդի որակը Քաջարանի տարածքի հանքարդյունահանման տեղամասերում. աղտոտիչների ցրման մոդելավորման համաձայն (ՇՄԱԳ, Հատոր 3, Բաժին 3.1) օդի որակի վրա Ծրագրի թողած ազդեցությունները կառուցման և շահագործման փուլերում կրում են տեղային բնույթ և չեն տարածվում դեպի Քաջարանի հանքավայրեր, որոնք առաջարկվող ճանապարհից գտնվում են մոտ 6 կմ հեռու: Այսպիսով, այս գործոնը չի ներառվել ԳԱԳ շրջանակում, այդուհանդերձ օդի որակի հարցը հաշվի է առնվել համայնքների և աշխատանքի անվտանգության ենթատեքստում (տես վերևում),
- Խմելու ջրի որակը. սա գրունտային ջրերի որակ ԱԲԲ-ի մաս է հանդիսանում, որը ներառված է ԳԱԳ-ում:

Ակնկալվում է, որ ԳԱԳ-ի **ժամանակային սահմաններն** ընդգրկում են Ծրագրի կառուցման և շահագործման փուլերը.

- Ակնկալվում է, որ կառուցումը (շինարարությունը) կսկսվի 2024թ. սկզբին ու կտևի 6 տարի,
- Ճանապարհը նախատեսված է 25 և ավելի տարի ծառայության ժամկետի համար:

ԳԱԳ-ի **տարածական (աշխարհագրական) սահմանները** համեմատվում են Ծրագրի Ազդեցության Գոտիների (ԱԳ) հետ ՇՄԱԳ Հատորներ 2-ում (Կենսաբազմազանություն), 3-ում (Ֆիզիկական միջավայր) և 4-ում (Սոցիալական միջավայր) սահմանված տարբեր ԲևՍ ընկալիչների համար: Ի լրումն, ԳԱԳ-ի տարածական սահմանները ԲևՍ ընկալիչների համար նկատի են առնում հնարավոր ավելի լայն ԱԳ-ներ՝ կապված այլ ծրագրերի / գործունեությունների հետ:

**2.3 Նախնական գնահատման Փուլ II՝ որոշում այլ գործունեությունները (Ծրագրերը) ԳԱԳ-ում ներառելու համար**

ԳԱԳ այս փուլում իրականացվող գործառնությունները ներառում են.

1. Ծրագրերի «ընդարձակ ցանկի» որոշում, որոնք կարող են առնչություն ունենալ այս ԳԱԳ հետ (տես **Աղյուսակ 1**, ձախ սյունակ): Ծրագրերի ընդարձակ ցանկը որոշվել է՝ ելնելով վերը թվարկված ԱԲԲ-ներից և հնարավոր ազդեցությունների աստիճանից, ինչպես նաև հիմնվելով հետևյալի վրա.
  - ա) Շրջակա միջավայրի նախարարության հանրամատչելի տվյալների բազայի վերլուծական ակնարկ ՇՄԱԳ թույլատրված՝ կառուցման ընթացքում գտնվող գործունեությունների, ինչպես նաև այն ծրագրերի վերաբերյալ, որոնց համար ՇՄԱԳ իրականացման հայտ է ներկայացվել Հայաստանի օրենսդրության համապատասխան, և
  - բ) Խորհրդակցություններ Ծրագրի ազդակիր վարչական միավորների ղեկավարների հետ 2022թ. հուլիս - օգոստոս ամիսների ընթացքում:

Դիտարկվող ծրագրերի ընդարձակ ցանկի կազմման համար նախապայմաններ են հանդիսացել այս ԳԱԳ-ի մասին բավարար տեղեկությունների առկայությունը և Ծրագրի հետ միասին գումարային ազդեցություն թողնելու հնարավորությունը:

- Ընդարձակ ցանկում ներառված ծրագրերի համապատասխանության, ԱԲԲ-երի վրա դրանց հնարավոր ազդեցությունների, Ծրագրի հետ տարածական և/կամ ժամանակային փոխձածկման (համընկման) վերլուծություն (տես **Աղյուսակ 1**, մեջտեղի սյունակ): Դա կատարելու արդյունքում որոշվել են մի շարք ծրագրեր / գործունեություններ մեկ կամ ավելի ԱԲԲ վրա ազդելու հնարավորությամբ, այդպիսով ընդգրկվելով ԳԱԳ շրջանակում (տես **Աղյուսակ 1**, աջ սյունակ):

**Աղյուսակ 1. Ծրագրերի վերլուծությունը, որոնք կարող են ավանդ ունենալ ԱԲԲ-երի վրա գումարային ազդեցությունում**

Նախկին, ներկա և ապագա ծրագրեր	Փոխներգործությունը Ծրագրի հետ (տարածական, ժամանակային, ըստ գործունեության տեսակի)	Ներառվել է / չի ներառվել ԳԱԳ-ում
Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում (ապագա ծրագիր)	Այս գործունեությունն անհրաժեշտ է նոր թունելների գործառնման և ճանապարհի լուսավորության համար, այն Ծրագրի հետ ունենալու է տարածական և ժամանակային փոխներգործություն: Նախատեսվող էլեկտրահաղորդման գծերը դիտվում են որպես Ծրագրի հետ կապված (կից) օբյեկտներ <sup>8</sup> : Էլեկտրահաղորդման գծերի անցկացման ուղիները դեռևս հայտնի չեն, սակայն դրանց հարցը պետք է ավարտված լինի մինչև Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածը շահագործման հանձնելը:	Ներառվել է
Շամբի և Գեղիի գործող ՅԷԿ-եր (նախկին ծրագրեր)	Այս ՅԷԿ-երը համեմատաբար մոտ են գտնվում Ծրագրի ճանապարհահատվածի ուղեգոտուն և օգտագործում են տեղական գետերի պաշարները, որոնք, ենթադրվում է, որ հանդիսանալու են Ծրագրի համար տեխնիկական ջրի աղբյուրներ: Այնուամենայնիվ, ենթադրվում է, որ Ծրագրի կարիքների համար մակերևութային ջրառը գետահոսքերի զգալի փոփոխություն չի առաջացնի ՅԷԿ-երի համար և չի անդրադառնա ՅԷԿ-երի արտադրական հզորությունների վրա: Քանի որ Ծրագրի մնացորդային ազդեցությունը նման ԱԲԲ վրա, ինչպիսին մակերևութային ջրի պաշարներն են, համարվում է անտեսվող, նաև հաշվի առնելով, որ ՅԷԿ-երից դուրս եկող ջուրը խիստ մշտադիտարկման է ենթարկվում կարգավորող մարմինների կողմից ջրի որակի վերաբերյալ ազգային սահմանափակումների առումով, ինչպես նաև փոխներգործության մակարդակն այդ նախկին ծրագրերի հետ նվազագույն է, ՅԷԿ-երը չեն ներառվել ԳԱԳ-ում:	Չի ներառվել
Յյուսիս-Յարավ ճանապարհային Միջանցքի (ՅՅՃՄ) Քաջարան-Ագարակ հատվածի ծրագիրը, բաղկացած մրցույթին ներկայացված երկու առանձին լոտերից՝ ճանապարհի հատվածը և թունելի իր մուտքով (ապագա ծրագիր)	Ագարակն ու Քաջարանը միմյանց հետ կապելու համար նախատեսվող ճանապարհը Յյուսիս-Յարավ ճանապարհային Միջանցք ծրագրի մաս է հանդիսանում (Ծրագրի ճանապարհահատվածին համանման), որը Ծրագրի ճանապարհահատվածին կմիանա Լեռնաձորից մոտ 1 կմ հեռավորության վրա ( <b>Նկար 1</b> ). Քաջարան-Ագարակ ճանապարհը կֆինանսավորվի Եվրասիական Ներդրումների Բանկի կողմից, ինչը նախատեսում է 32 կմ երկարությամբ ճանապարհի և 7.2 կմ թունելի կառուցում, ինչպես նաև թունելի 4 կիլոմետրանոց մուտքային մասի վերականգնում: Ակնկալվում է, որ շինարարությունը կսկսվի 2023թ. աշնանը և կտևի մոտ 3.5 տարի, համընկնելով Ծրագրի	Ներառվել է

<sup>8</sup> Չնայած ակնկալվում է, որ կից օբյեկտները գնահատվում են միջազգային վարկատուների պահանջներին համապատասխան իրականացված ՇՄԱԳ-ում՝ հիմնական գործունեությունների հետ միասին, այս դեպքում էլեկտրահաղորդման գծերի ազդեցությունների ողջամիտ գնահատում կատարելու համար տեղեկություններ առկա չեն եղել: Յետևաբար, այդ կից օբյեկտների գնահատումը բարձր մակարդակով կատարվել է այս ԳԱԳ-ի ենթատեքստում:


Նախկին, ներկա և ապագա ծրագրեր	Փոխներգործությունը Ծրագրի հետ (տարածական, ժամանակային, ըստ գործունեության տեսակի)	Ներառվել է / չի ներառվել ԳԱԳ-ում
	կառուցման փուլի հետ: Նախատեսվող գործունեությունը կառաջացնի համանման ԲևՍ ազդեցություններ, ինչպիսիք տեղի ունեն Ծրագրի դեպքում, այդ թվում՝ ազդեցություններ հողի պաշարների, կենսաբազմազանության, ճանապարհներից օգտվողների և ճանապարհային ենթակառուցվածքների վրա:	
Ողջի պոչամբարի վերականգնում / ռեկուլտիվացում (հետագա գործունեություն՝ կապված նախկին ծրագրի հետ)	Պոչամբարը գտնվում է առաջարկվող ճանապարհի 57+600 կմ -ից մինչև 59+500 կմ ուղեհատվածում՝ նախատեսվող Թունել 09-ից մոտ 3 կմ հեռավորության վրա ( <b>Նկար 1</b> ): Թունելի կառուցումից առաջացած կամ մոտակա լանջերից փորված հանույթը կարող է օգտագործվել այդ տեղամասի վերականգնման համար (տես այլընտրանքային ՀՀՏԿ վերաբերյալ քննարկումն այս պոչամբարի մասին <b>ՇՄՍԳ Հատոր 1-ի Բաժին 3.9-ում</b> ): Այս տարբերակը սկզբունքորեն քննարկվել է 2023 թվականի ապրիլին՝ ՇՄՆ հետ հանդիպման ժամանակ: Հանույթի պիտանիությունն այս գործունեության համար հաստատելու նպատակով անհրաժեշտ է մշակել պոչամբարի հողաբարելավման նախագիծ, որի համար կպահանջվի մոտ ինը ամիս: <i>Նշում՝ Այս գործունեությունը (միջոցառումը) նախատեսվել է Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) կողմից, որից հետո՝ 2023թ. չեղարկվել է ծրագրի համար կանխատեսվող բարձր ծախսերի պատճառով: Հետագայում այն կարող է վերսկսվել և այդ դեպքում տեղի կունենա ժամանակային փոխձածկում:</i>	Ներառվել է
Փխրութի պոչամբարի վերականգնում / ռեկուլտիվացում (հետագա գործունեություն՝ կապված նախկին ծրագրի հետ)	Պոչամբարը գտնվում է առաջարկվող ճանապարհի հարավային եզրից 1 կմ հեռու ( <b>Նկար 1</b> ): Ներկա պահին պատրաստվում է բարելավման նախագիծը, որը հանույթի օգտագործում չի նախատեսում:	Ներառվել է
Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցում (ներկա ծրագիր)	Բժշկական կենտրոնի վերակառուցումը Սիսիանում սկսվել է 2022 թվականի ապրիլին՝ նախատեսվող 1-1.5 տարի տևողությամբ: Ակնկալվում է, որ այս գործունեությունը կավարտվի մինչ Ծրագրի կառուցման փուլի մեկնարկը:	Չի ներառվել
Տեխնիկական ջրամատակարարման համակարգի կառուցում Չանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատի (ՉՊՄԿ) համար (ապագա ծրագիր)	ՉՊՄԿ հարստացուցիչ ֆաբրիկան ջրով ապահովելու նպատակով Գեղի ջրամբարից մինչև Լեռնաձորի մոտ գտնվող՝ ընկերության պոմպակայան ջրամատակարարման խողովակաշարի կառուցումը հնարավոր է, որ համընկնի ճանապարհի կառուցման հետ (մասնավորապես, Թունել 08-ի, Կամուրջ 21-ի կառուցման և 46-50 կմ հատվածում հողային աշխատանքների կատարման հետ): Այդ ուղեգիծը նախագծվում է, սակայն այն դեռևս հստակեցված չէ, քանի որ խորհրդակցությունները խողովակաշարը նախագծողների հետ թույլ են տալիս խողովակաշարի անցկացման ուղու մասին միայն շատ մոտավոր ենթադրություններ անել ( <b>Նկար 2</b> ): Ակնկալվում է, որ խողովակաշարի կառուցումը կսկսվի 2023 թվականի վերջին և հնարավոր է տևի 3-6 ամիս: Վտանգ կա, որ ՉՊՄԿ-ն կսկսի խողովակաշարի կառուցումը, իսկ հետագայում կարիք կլինի տեղափոխել այն Ծրագրի պատճառով: Այս երկու ծրագրերի կառուցման փուլերում հնարավոր է նաև տարածական ու ժամանակային փոխձածկում տեղի ունենա:	Ներառվել է

Նախկին, ներկա և ապագա ծրագրեր	Փոխներգործությունը Ծրագրի հետ (տարածական, ժամանակային, ըստ գործունեության տեսակի)	Ներառվել է / չի ներառվել ԳԱԳ-ում
<p>Հիդրոտեխնիկական և հիդրոէրկրաբանական աշխատանքներ Գեղի ջրավազանին հարակից տարածքում (ապագա ծրագիր)</p>	<p>ՉՊՄԿ-ն նախատեսում է հիդրոտեխնիկական և հիդրոէրկրաբանական աշխատանքներ կատարել, Գեղի ջրավազանին հարակից սահմանափակ տարածքում (<b>Նկար 2</b>): Այդ աշխատանքները փոխաձեռնվում չեն առաջացնի տվյալ տարածքում Ծրագրով նախատեսված ճանապարհի կառուցման հետ:</p>	<p>Չի ներառվել</p>
<p>Սիսիանի բազալտի հանքավայրի հետազոտում և արդյունահանում (ապագա ծրագիր)</p>	<p>Նախատեսվող հանքավայրը կգտնվի Սիսիան համայնքի Իշխանասար բնակավայրից 330 մ հեռու՝ դեպի հյուսիս արևմուտք և Ծրագրի ճանապարհի հյուսիսային եզրից 1,600 մ հեռավորության վրա (<b>Նկար 3</b>). Հանքի կառուցումը նախատեսվում է սկսել 2023 թվականին: Չբաղեցվող տարածքը Ծրագրի կողմից ձեռք բերվող հողատարածքի նկատմամբ (293 հա, առանց ԳԳՏՎ-երի և ժամանակավոր այլ տեղամասերի) ազդեցությունը համարվում է անտեսվող: Ծրագրի կառուցման և շահագործման վերաբերյալ բարձր պահպանողականությամբ մոդելավորման հաշվարկները ցույց են տալիս, որ աղմուկի և օդի վրա կանխատեսվող ազդեցությունները չեն հասնում Իշխանասար գյուղին: Օդի որակի հետ կապված և աղմուկի ազդեցություններն առաջարկվող ձեռնարկության կողմից կլինեն տեղայնացված: Այս գործունեության նկատմամբ կիրառվելու է ՇՄԱԳ ազգային ընթացակարգը, ուստի որպես այդպիսին, ՇՄՆ կպահանջի, որ այն տեղաբաշխվի ու նախագծվի այնպես, որ օդի որակի և աղմուկի նորմերը բնակավայրում չզերազանցվեն: Չնայած կարող է տեղի ունենալ ժամանակային փոխաձեռնվում Ծրագրի կառուցման և շահագործման հետ, տարածական փոխաձեռնման և գումարային ազդեցության հավանականությունը շատ ցածր է, որը հիմնականում կապված է պետական միևնույն ճանապարհների (օրինակ՝ Մ2) ծանրաբեռնման և նոր աշխատատեղերի ստեղծման հետ: Այս գումարային ազդեցությունների ուժգնությունը համարվում է ցածր, ուստի դրանք հետագա դիտարկման համար հաշվի չեն առնվում:</p>	<p>Չի ներառվել</p>
<p>Ընթացիկ գործունեություններ Ծրագրի ազդակիր գյուղերում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ռոզման ջրի նոր համակարգի տեղակայում / վերականգնում Լոր գյուղում</li> <li>• Խմելու ջրի համակարգի (վերա)կառուցում Դարպաս գյուղում</li> <li>• Դպրոցի կառուցման ավարտ Դարպաս գյուղում</li> </ul>	<p>Ելնելով Ծրագրի ազդակիր վարչական միավորների ղեկավարների հետ հարցազրույցներից, նշված բոլոր գործունեությունները նախատեսվում է ավարտին հասցնել 2023 թվականի առաջին կիսամյակում: Չի ակնկալվում, որ շահագործման հանձնվելուց հետո դրանք ազդեցություններ կունենան Ծրագրի հետ ժամանակային կամ տարածական փոխաձեռնումներ առաջացնելու միջոցով (Լորի և Դարպասի տեղադիրքերի վերաբերյալ տես <b>Նկար 4</b>):</p> <p>Նույնիսկ, եթե այդ ծրագրերը չավարտվեն մինչև 2023թ. կեսերը, այլ հետաձգվեն, հասնելով մինչև 2024թ. սկիզբը, երբ Ծրագրի կառուցման նախապատրաստական աշխատանքները կարող են սկսվել, գումարային ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ Ծրագրի կառուցման նախապատրաստական գործունեության սկզբնական շրջանում կատարվելու են մշակութային ժառանգության (ՄԺ) հետ կապված մաքրման աշխատանքներն ու Կապալառուի մոբիլիզացիան: Հետևաբար, տարածական կամ ժամանակային փոխաձեռնումների առաջացումը քիչ հավանական է:</p>	<p>Չի ներառվել</p>
<p>Դիզեյային տրանսպորտի</p>	<p>ՉՊՄԿ ՓԲԸ նախատեսում է 3.5-4 տարիների ընթացքում՝ սկսած 2023թ. հուլիս-օգոստոս ամիսներից կառուցել մի</p>	<p>Չի ներառվել</p>

Նախկին, ներկա և ապագա ծրագրեր	Փոխներգործությունը Ծրագրի հետ (տարածական, ժամանակային, ըստ գործունեության տեսակի)	Ներառվել է / չի ներառվել ԳԱԳ-ում
<p>սպասարկման կայանի, պայթուցիկ կյուբերի համար նոր պահեստարանի կառուցում, դիզելային տրանսպորտային միջոցների շարժակազմի նորացում, վթարային սպասարկման ջրավազանների տեղակայում ոլոկերային անցումներ թիվ 1, 2 և 4-ում (ապագա գործունեություններ)</p>	<p>քանի օբյեկտ: Ընդհանուր առմամբ, ծրագրի բաղադրիչները՝ բացառությամբ ոլոկերային անցում թիվ 1-ից, տեղակայվելու են առաջարկվող ճանապարհից 9-10 կմ հեռու: Ղյուկերային անցում թիվ 1-ն անցնելու է Կավճուտ գյուղի մոտ գտնվող հովտով, տարածվելով դրա լանջերին՝ առաջարկվող ճանապարհի 54+000 և 55+000 կմ նիշերի ներքևում (Կավճուտ գյուղի տեղադիրքի վերաբերյալ տես <b>Նկար 2</b>): Հովտում վթարային սպասարկման ջրավազանը տեղակայվելու է հողային ծածկույթի խախտված մասում՝ սահմանափակվելով խողովակագծի հատակային մասով: Չնայած կարող է տեղի ունենալ ժամանակային համընկնում Ծրագրի կառուցման հետ, տարածական փոխձածկման և գումարային ազդեցության հավանականությունները շատ ցածր են:</p>	
<p>Ավագահանքի կառուցում և շահագործում Լեռնաձոր բնակավայրում (ապագա ծրագիր)</p>	<p>Ավագահանքը կզբաղեցնի 0.31 հա տարածք և կտեղավորվի Լեռնաձորի սահմաններում՝ առաջարկվող ճանապարհի հարավային եզրից ավելի քան 1 կմ հեռավորության վրա: Այն նախատեսվում է շահագործման հանձնել 2023թ. (Լեռնաձոր գյուղի տեղադիրքի համար տես <b>Նկար 1</b>): Ծրագրի համար անհրաժեշտ հողատարածքի (293 հա, առանց ՀՀՏԿ-երի և ժամանակավոր այլ տեղամասերի) ենթատեքստում տվյալ գործունեության կողմից՝ Ծրագրի հետ միասին հողային պաշարների վրա գումարային ազդեցության ավելացման հնարավորությունը համարվում է անտեսվող: Ծրագրի կառուցման և շահագործման վերաբերյալ բարձր պահպանողականությամբ մոդելավորման հաշվարկները ցույց են տալիս, որ աղմուկի և օդի վրա կանխատեսվող ազդեցությունները չեն հասնում Լեռնաձոր գյուղին: Օդի որակի հետ կապված և աղմուկի ազդեցություններն առաջարկվող ձեռնարկության կողմից կլինեն տեղայնացված: Այս գործունեության նկատմամբ կիրառվելու է ՇՄԱԳ ազգային ընթացակարգը, ուստի որպես այդպիսին, ՇՄՆ կպահանջի, որ այն տեղաբաշխվի և նախագծվի այնպես, որ օդի որակի և աղմուկի նորմերը բնակավայրում չգերազանցվեն: Չնայած կարող է տեղի ունենալ ժամանակային փոխձածկում Ծրագրի կառուցման և շահագործման հետ, տարածական փոխձածկման և գումարային ազդեցության հավանականությունը շատ ցածր է, որը հիմնականում կապված է պետական միևնույն ճանապարհների (օրինակ՝ Մ2) ծանրաբեռնման և նոր աշխատատեղերի ստեղծման հետ: Այս գումարային ազդեցությունների ուժգնությունը համարվում է ցածր, ուստի դրանք հետագա դիտարկման համար հաշվի չեն առնվում:</p>	<p>Չի ներառվել</p>
<p>Փիրուն հանքաքարային կյուբերի փոխադրման համար ավտոմատացված վագոնետային համակարգի («SARD-1200» համակարգ) կառուցում (ապագա ծրագիր)</p>	<p>ՉՊՄԿ ՓԲԸ-ն մտադիր է ներկայումս օգտագործվող ինքնաթափ բեռնատարների փոխարեն հանքանյութ իրենց հանքավայրից դեպի ջարդիչներ փոխադրել ավտոմատացված վագոնետների (երկաթուղային) համակարգի միջոցով (ՉՊՄԿ տեղադիրքի համար տես <b>Նկար 2</b>): Կառուցումը հնարավոր է սկսվի 2023թ. վերջին՝ հանքի և ֆաբրիկայի միջև գոյություն ունեցող սահմանափակ միջանցքում: Այս ծրագիրը Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի Ծրագրի հետ միասին ԱԲԲ-ների վրա գումարային ազդեցություններ չի ավելացնի: ՉՊՄԿ այս նախաձեռնության հետ կապված տեղի կունենա դրական ազդեցություն ջերմոցային գազերի</p>	<p>Չի ներառվել</p>



Նախկին, ներկա և ապագա ծրագրեր	Փոխներգործությունը Ծրագրի հետ (տարածական, ժամանակային, ըստ գործունեության տեսակի)	Ներառվել է / չի ներառվել ԳԱԳ-ում
	արտանետումների նվազեցման շնորհիվ, հենց որ վազոնետների համակարգը գործի դրվի:	
Ծրագրի ճանապարհի հետ տրամախաչվող գծային ենթակառուցվածք (նախկին ծրագրերի հետ կապված ներկա գործունեություն)	<p>Գոյություն ունեցող գծային ենթակառուցվածքները կտեղափոխվեն Ծրագրի ճանապարհի ուղեգծից դուրս, ինչը լրացուցիչ հողատարածքի ձեռքբերման (օտարման) անհրաժեշտություն կառաջացնի: Վերատեղաբաշխման այս ազդեցությունը հողատարածքի վրա համարվում է Ծրագրի <i>անուղղակի ազդեցություն</i>, և որպես այդպիսին, ներառվել է Ծրագրի Տարաբնակեցման Շրջանակում և Տարաբնակեցման Պլանում (այսինքն՝ փոխհատուցումների ստացման նույն իրավունքը կիրառվում է ինչպես Ծրագրի կողմից հողատարածքի ուղղակի ձեռքբերման, այնպես էլ ենթակառուցվածքի վերատեղաբաշխման հետևանքով առաջացող՝ հողատարածքի անուղղակի ձեռքբերման նկատմամբ): Վերատեղաբաշխման աշխատանքները կիրականացվեն Կոմունալ Ծառայությունների Օբյեկտների Պահպանման և Վերատեղաբաշխման Պլանի համաձայն (տես ՇՄՍԱԳ Հատոր 4-ը՝ «Սոցիալական Միջավայր» և Հատոր 6 -ը՝ «ԲՍԿ»)՝ մինչ Ծրագրի կառուցումն այդ վայրերում կմեկնարկի:</p> <p>Այդ ենթակառուցվածքների կանոնավոր շահագործումն ու Ծրագրի գործունեությունը կարող են միմյանց փոխձածկել, սակայն ԱԲԲ-երի վրա ակնկալվող 0 կամ շատ ցածր ազդեցություններով:</p>	Չի ներառվել



Նշում՝ կարևոր գիծը Ծրագրի ճանապարհն է, իսկ մանուշակագույն գիծը Քաջարան-Ագարակ ճանապարհի դեպի Քաջարանի թունել տանող մուտքային մասն է

**Նկար 1. Քարտեզ, որտեղ ցույց են տրված՝ i) Ողջի պոչամբարը, ii) կետը, որտեղ միանում են նախատեսված Միսիան-Քաջարան և Քաջարան-Ագարակ ճանապարհները, և iii) Փխրուլթի պոչամբարը**



**Նկար 2. Քարտեզ, որը ցույց է տալիս 2ՊՄԿ արդյունաբերական ջրամատակարարման խողովակաշարի նախնական կերպով ենթադրվող ուղին ծրագրի սկատմամբ**



**Նկար 3. Քարտեզ, որը ցույց է տալիս առաջարկվող Միսիանի բազալտի հանքի տեղադիրքը Իշխանասար գյուղի, ծրագրի ճանապարհի և ուղեբաժանի սկատմամբ**





**Նկար 4. Քարտեզ, որը ցույց է տալիս Դարպաս և Լոր գյուղերի տեղադիրքերը Ծրագրի ճանապարհի նկատմամբ**

Ի լրումն, ելակետային վիճակի վերլուծությունը ստուգվել է սթրեսի ցանկացած սոցիալական և/կամ բնապահպանական **աղբյուրի կամ արտաքին գործոնի** որոշման նպատակով, ինչը կարող է ազդեցություն ունենալ ԱԲԲ-երի վիճակի վրա (տես նաև **Բաժին 2.2**-ը): Ծրագրի համար սթրեսի նման գործոններ կարող են հանդիսանալ.

- Կլիմայի փոփոխությունը հաճախ տեղի ունեցող ծայրահեռ անբարենպաստ եղանակային պայմաններով, ինչը կարող է մեծացնել ջրհեղեղների, ցեխահեղեղների (սելավների), սողանքների և ձնահյուսների (փլուզումների) ռիսկը, ինչն արագացնում է ամայացման և հողի դեգրադացիայի գործընթացը (**ՇՄՍԱԳ, Հատոր 3, Բաժին 3.2**),
- Վտանգավոր երկրաբանական գործընթացները (ջրհեղեղ, ձնահյուս, սեյսմիկ և ցեխահեղեղային ռիսկեր), որոնց մասին հայտնի է, որ այդպիսիք տեղի են ունենում, և մեծամասամբ Գեղիի տարածքում (**ՇՄՍԱԳ, Հատոր 3, Բաժին 3.5**),
- Էրոզիան, որն առաջանում է անասնապահության, տարածքների անվերահսկելի տրորմամբ ստեղծված ճանապարհների և խամ գյուղատնտեսական հողերի օգտագործման պատճառով, ինչը դիտվում է Ծրագրի տարածաշրջանի համարյա բոլոր բնակավայրերի մոտ գտնվող շեպերի (լանջերի) վրա (**ՇՄՍԱԳ, Հատոր 3, Բաժին 3.5**), և
- Հողային աշխատանքների ներգրավմամբ ցանկացած նոր գործունեություն, որն ազդեցություն կունենա պատմամշակութային ժառանգության վրա տարածաշրջանում մշակութային, պատմական, հնագիտական, արգելոցային (բնապահպանական), հնեաբանական և հոգևոր նշանակության օբյեկտների առատ առկայության հետևանքով (**ՇՄՍԱԳ, Հատոր 4, Բաժին 2.3**):

Այս տարրերը կամ գործոնները դիտարկվում են ԳԱԳ հաջորդ փուլերում, երբ դատողություններ են արվում գումարային ազդեցությունների նշանակալիության մասին (**Աղյուսակ 3**).

**2.4 Փուլեր 4 և 5՝ ԱԲԲ վրա գումարային ազդեցության նշանակալիության գնահատում**

Քանի որ ԳԱԳ-ն ապագայի կողմնորոշում ունի, ապա կենտրոնանում է այն ըմբռնման վրա, թե արդյոք գումարային ազդեցությունները կներգործեն ԱԲԲ պայմանների կայունության կամ կենսունակության վրա գործընթացների և բնական ուժերի զուգակցման շնորհիվ: «Կայունությունը կամ կենսունակությունը» մեկնաբանվում են որպես ԱԲԲ զգայնություն, այսինքն՝ այն աստիճանը (չափը), թե որքան են նրանք ենթակա (ընկալունակ) կամ անկարող զսպել (հաղթահարել) վնասվածքը, վնասը կամ կորուստը:

Որոշված ԱԲԲ-երը ներառում են մի շարք անհատական և կոնկրետ (տարածքին հատուկ) ԲևՍ ընկալիչներ միմյանցից տարբեր զգայնությամբ և արժեքներով: ՇՄՍԱԳ Յատորներ 2, 3 և 4 -ում ԲևՍ ընկալիչներին վերագրված զգայնությունների հիման վրա ընդհանրական ԱԲԲ-երին տրվել են պահպանողական զգայնություններ (**Աղյուսակ 2**): Այս զգայնությունները մուտքագրվել են գումարային ազդեցությունների նշանակալիության գնահատման մեջ (**Աղյուսակ 3**):

**Աղյուսակ 2. ԳԱԳ համար ընդունված ԱԲԲ զգայնությունը**

<b>Ընկալիչների խումբ</b>	<b>Չգայնություն / արժեք</b>
Տեղական համայնքներ (առողջություն և անվտանգություն)	Միջին
Ճանապարհներից օգտվողներ	Միջին
Ծրագրում ներգրավված աշխատողներ	Միջին
Կենսաբազմազանություն (կրիտիկական կենսամիջավայրեր, ԿԱԶ-եր և պահպանվող տարածքներ)	Բարձր
Հողատարածք (հողօգտագործում և գյուղատնտեսություն)	Բարձր
<b>Բնահող (բնահողի ոչնչացում և աղտոտում)</b>	<b>Միջինից մինչև բարձր</b>
Գրունտային ջրեր	Բարձր
Հանրային ենթակառուցվածք (առողջապահական հիմնարկներ)	Միջին
Լանդշաֆտ (տեղանք)	Միջինից մինչև բարձր
Պատմամշակութային ժառանգություն	Ցածրից մինչև բարձր
Չբաղվածություն և աշխատաշուկա (տեղական և մոնիցինգայլ մակարդակով)	Միջին
Տնտեսություն	Ցածրից մինչև միջին

ԳԱԳ-ում ազդեցությունները չափվում են ԱԲԲ արձագանքի, և ի վերջո, պայմանների էական փոփոխության տեսանկյունից (ՄՖԿ, 2013): Գումարային ազդեցությունների նշանակալիության մասին դատողություններն արվում են փոփոխության ընդունելի շեմերի կամ սահմանների ենթատեքստում, որի շրջանակում ԱԲԲ վիճակը համարվում է հանդուրժելի, որից այն կողմ հետագա փոփոխությունն անհանդուրժելի է դառնում: Սույն ԳԱԳ-ի համար որպես շեմեր օգտագործվում են ՇՄՍԱԳ Յատորներ 2, 3 և 4 -ի թեմատիկ բաժիններում սահմանված էլակետային չափորոշիչները: Սահմանված շեմերի բացակայության դեպքում, օրինակ՝ հողային պաշարների օգտագործման կամ ճանապարհներից օգտվողների վերաբերյալ եզրակացություններ կատարելիս հիմնվում են ՇՄՍԱԳ խմբի չորս փորձառու մասնագետների (բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության, տարաբնակեցման ոլորտի փորձագետների) ամփոփ կարծիքների վրա:

ԱԲԲ-երի վրա հնարավոր գումարային ազդեցությունները գնահատված են ստորև:

**Աղյուսակ 3. ԱԲԲ-երի վրա հնարավոր գումարային ազդեցության գնահատումը**

Գումարային ազդեցության նշանակալիության պարզաբանագիր՝

բացասական		դրական	
Չնչին (անտեսվող)	չափավոր	Չնչին (անտեսվող)	չափավոր
Փոքր	զգալի	Փոքր	զգալի
Փոքրից մինչև չափավոր	բացակայում է	Փոքրից մինչև չափավոր	բացակայում է

ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ ճանապարհային Միջանցքի Զաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՄԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
<p><b>Տեղական համայնքներ</b></p> <p>1. Ազդեցություններ բնակչության առողջության վրա օդի աղտոտման և աղմուկի պատճառով</p>	<p>Էլեկտրահաղորդման գծերի նախատեսվող միացումների, այդ թվում՝ անցկացման առաջարկվող ուղիների, միացման կետերի, հզորությունների) մասին ներկայումս տեղեկություններ առկա չեն:</p> <p>Էլեկտրահաղորդման գծերի կառուցումը հնարավոր է ազդի մոտակա բնակավայրերի շրջակա միջավայրի օդի որակի և աղմուկի մակարդակի վրա: Այնուհանդերձ, այդպիսի ազդեցությունները կբացառվեն կամ նվազագույնի կհասցվեն, քանի որ էլեկտրահաղորդման գծերի նախագծումը, կառուցումն ու շահագործումը նույնպես պետք է բավարարեն Ծրագրի վարկատուների ԲԼՍ պահանջներին և ազգային կանոնակարգերին (Նշում՝ Էլեկտրահաղորդման գծերի նախագծման և ԲԼՍ պահանջները փաստաթղթերով հիմնավորված են Ծրագրի Բնապահպանական և</p>	<p>Զաջարան - Ագարակ ճանապարհը կմիանա Ծրագրի՝ Միսիան-Զաջարան ճանապարհի հարավային ծայրի հետ ամենամոտ գտնվող բնակավայրից՝ Լեռնաձոր վարչական միավորից մոտ 900 մ հեռու: Չնայած այդ երկու ճանապարհահատվածների կառուցման և շահագործման հետևանքով տեղական համայնքների բնակչության առողջության վրա տարածական գումարային ազդեցություն չի ակնկալվում (քանի որ միացման կետը հեռու է բնակելի տարածքներից (տես <b>Նկար 1</b>), Զաջարան-Ագարակ ճանապարհի կառուցմամբ պայմանավորված լրացուցիչ երթևեկությունը կարող է նպաստել շինարարական տեղափոխումների ուղիների երկայնքով տեղաբաշխված բնակավայրերում օդի վրա և աղմուկային ազդեցություններին: Այս գումարային ազդեցությունը կառուցման փուլում դիտվում է որպես <b>փոքրից մինչև չափավոր</b> ազդեցություն: Շահագործման փուլում նման</p>	<p><i>Ողջիի</i> պոչամբարը գտնվում է առաջարկվող ճանապարհի հարավային եզրի կողքին՝ առավել մոտ գտնվող բնակավայրից (Լեռնաձոր) մոտ 1 կմ հեռու:</p> <p><i>Փխրուբի</i> պոչամբարը գտնվում է առաջարկվող ճանապարհի հարավային եզրից մոտ 1 կմ, իսկ առավել մոտ գտնվող բնակավայրից (Լեռնաձոր)՝ 0.3 կմ հեռու:</p> <p>Հայտնի չէ, արդյո՞ք երկու պոչամբարներն էլ միաժամանակ կվերակուլտիվացվեն:</p> <p>Վերակուլտիվացիայի աշխատանքների բնույթն ու Ողջիի պոչամբարի և Ծրագրի միջև ենթադրվող համագործակցությունը թույլ է տալիս հետևություն անել, որ հանույթի փոխադրումը տեղի կունենա Ծրագրի տեղամասերի (Ծրագրի թունելների (օրինակ՝ Թունել 09-ի) կամ ՀՀՏՎ-երի) և Ողջիի պոչամբարի միջակայքում: Ծանապարհների <i>երկայնքով</i> առկա բնակելի շրջանները, որոնք հնարավոր է օգտագործել հողային հանույթի տեղափոխման և Ծրագրի հետ կապված փոխադրումների նպատակով, ներառում են, օրինակ՝ Կավճուտ և Ձագիկավան (նախկին Մուսալլամ) գյուղերի մի մասը, որոնք</p>	<p>Ակնկալվում է, որ խողովակաշարի հնարավոր ուղեգծի վրա կարող են տեղաբաշխված լինել որոշ բնակավայրեր, եթե հարմարության նպատակով այն կառուցվի գոյություն ունեցող ստորգետնյա խողովակաշարային ենթակառուցվածքի երկայնքով, այնուհետև հատի Մ2 ճանապարհին ու միանա ընկերության՝ գոյություն ունեցող ջրամատակարարման խողովակագծին (տես <b>Նկար 2</b>): Այդ դեպքում խողովակաշարի մի մասը և նոր ճանապարհին իր հարավային ծայրից դեպի Գեղիի ջրամբար (56+000-ից մինչև 51+000 ուղեհատվածը) կանցնեն գուրգահեռ և դրանց՝ օդի որակի վրա և աղմուկային ազդեցությունների ԱԳ-երը կարող են միմյանց փոխծածկել: Եթե այդ երկու ծրագրերի կառուցման փուլերը ժամանակով համընկնեն, օդի աղտոտումը</p>	<p><i>Բնակչության առողջության համար անտեսվողից փոքր և չափավոր հնարավոր բացասական գումարային վտանգներ են կանխատեսվում օդի աղտոտման և սոսիալ աղմուկի պատճառով Լեռնաձորի արևմտյան գոտում գտնվող փոքր տարածքի՝ Գեղիի շրջանում՝ ծրագրերի միջանցքներում, ինչպես նաև նախատեսվող և/կամ միաժամանակ ընթացող ծրագրերի շրջանակում շինարարական փոխադրումների համար օգտագործվող</i></p>

ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար Էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակառուցում	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ԴՍԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
	Սոցիալական Կառավարման Պլանում): Կառուցման հետ կապված ամբողջ տրանսպորտը միատեղ կարող է միայն <b>աննշան</b> չափով նպաստել աղմուկի և օդի աղտոտման ավելացմանը շինարարական տրանսպորտային ուղու երկայնքով տեղաբաշխված բնակավայրերում, ուստի դրա հետևանքով առաջացող ազդեցությունը բնակչության առողջության վրա համարվում է <b>անտեսվող</b> :	ազդեցությունները կապված են լինում ժամանակ առ ժամանակ սպասարկման Նպատակով պահանջվող ծառայողական երթևեկության հետ, ուստի գումարային ազդեցությունը դիտվում է <b>որպես աննշան</b> : Բացի այդ, ենթադրվում է, որ այդ գործունեությունը համապատասխանելու է միջազգային ԲևՍ վարկատուների ստանդարտների պահանջներին:	հարակից են Զիրսից M2 -ը տանող ճանապարհին, և գտնվում են M2 ճանապարհի կողքին ( <b>Նկար 1</b> ): Ոչ մեծ թվով ազդակիր բնակելի տների առկայությամբ (օրինակ՝ Կավճուտում և Ձագիկավանում՝ մինչև 10 մասնավոր տուն և 3 բնակելի շենք) պայմանավորված և համատեղ փոխադրումների հետևանքով օդի վրա և աղմկային <b>աննշան</b> հավելյալ ազդեցությունների արդյունքում ստացվող ընդհանուր ազդեցությունները բնակչության առողջության վրա համարվում են տեղայնացված և <b>չնչին (անտեսվող)</b> :	և աղմուկի մակարդակը կավելանա ուղու երկայնքով գտնվող բնակավայրերի համար, ինչը համարվում է, որ կունենա հնարավոր բացասական գումարային ազդեցություն <b>փոքրից մինչև չափավոր</b> նշանակալիությամբ:	<i>երթուղիների երկայնքով տեղաբաշխված բնակավայրերում:</i>
2. Հասարակական անվտանգության ռիսկեր՝ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների (վթարների) հետ	Կարող է ակնկալվել գոյություն ունեցող ճանապարհներով սպասարկող մեքենաների երթևեկության ծավալների աճ այս գործունեության և Ծրագրի կառուցման փուլերում օգտագործվող կյուբերի, սարքավորումների և աշխատողների փոխադրման համար: Այնուհանդերձ, ճանապարհատրանսպորտային վթարների հավանականության մեծացման հետ կապված հասարակական անվտանգությանը սպառնացող գումարային ռիսկերը կլինեն կարճաժամկետ և չեն գերազանցի Ծրագրի ռիսկի մնացորդային՝ <b>փոքր</b> մակարդակը, քանի որ այս գործունեությունը սպասարկող լրացուցիչ տրանսպորտային միջոցների	ճանապարհի այս հատվածի շինարարությունը կհամընկնի Ծրագրի ճանապարհի կառուցման հետ: Հնարավոր է, որ երկու ծրագրերը սպասարկող առաքումային տրանսպորտային միջոցներն օգտագործեն նույն ճանապարհները: Դա մի 3-4 տարի ժամկետի ընթացքում այդ ճանապարհներին տրանսպորտային վթարների հավանականության մեծացման պատճառով կառաջացնի գումարային ռիսկեր հասարակական անվտանգության համար: Հասարակական անվտանգության գումարային ռիսկը դիտարկվում է որպես <b>փոքրից մինչև չափավոր</b> :	Ճանապարհի կառուցման փուլում կարող է ակնկալվել սպասարկող տրանսպորտային միջոցների երթևեկության ծավալի ավելացում դեպի պոչամբարներ և Ծրագրի ճանապարհի տեղամասեր կյուբերի, սարքավորումների և աշխատողների փոխադրման համար օգտագործվող ճանապարհներին: Հի ակնկալվում, որ ճանապարհատրանսպորտային վթարների հավանականության մեծացման հետ կապված հասարակական անվտանգությանը սպառնացող գումարային վտանգը կգերազանցի Ծրագրի ռիսկի մնացորդային՝ <b>փոքր</b> մակարդակը, քանի որ այս գործունեությունը սպասարկող լրացուցիչ տրանսպորտային միջոցների թիվը սահմանափակ է լինելու:	Արդյունաբերական ջրամատակարարման խողովակաշարի կառուցումը կպահանջի Զաջարանի և Գեղիի ջրամբարի միջև շինարարական տրանսպորտային միջոցների մի մասը երթևեկելու է տեղական նույն ճանապարհներով: Ծանր տրանսպորտային միջոցների միավորված հավելյալ երթևեկությունը կարող է առաջացնել հասարակական անվտանգությանը սպառնացող գումարային վտանգ՝ կապված ճանապարհատրանսպորտային վթարների հավանականության մեծացման հետ: Հասարակական անվտանգության գումարային ռիսկը դիտարկվում է	<i>Կարճաժամկետից մինչև միջնաժամկետ, անտեսվողից մինչև փոքր և չափավոր գումարային բացասական ազդեցություն հասարակական անվտանգության վրա Ծրագրի կառուցման ընթացքում ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառով՝ Նախատեսվող և/կամ միաժամանակ ընթացող ծրագրերի շրջանակում օգտագործվող</i>



ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուլթի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՍԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
	թիվը սահմանափակ կլինի:			որպես կարճաժամկետ և փոքրից մինչև չափավոր, քանի որ այս գործունեությունը սպասարկող լրացուցիչ տրանսպորտային միջոցների թիվը շատ սահմանափակ է լինելու:	ուղիների վրա:
<b>Ճանապարհներից օգտվողները</b> , նկատի առնելով շրջանի ճանապարհային հաղորդակցության բարելավումը և ճանապարհային անվտանգությունը	Այս գործունեությունն անհրաժեշտ է Ծրագրի ենթակառուցվածքի աշխատանքի համար, որն իր հերթին կապահովի տվյալ շրջանի ճանապարհային հաղորդակցության հնարավորությունների բարձրացում և ճանապարհային անվտանգություն ճանապարհներից օգտվողների համար	Ճանապարհի այս հատվածի կառուցումը կլրացնի Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցքի Ծրագիրը և կապահովի ճանապարհային Նոր հաղորդակցություն ամբողջ երկրի համար: Երկու ճանապարհներն էլ նախագծվել են ճանապարհների անվտանգության միջազգային ստանդարտների համապատասխանությամբ, որոնց շահագործումը կբարելավի ամբողջ երկրի ճանապարհային երթևեկության ընդհանուր անվտանգությունը:	ԱԲԲ-ի վրա գումարային ազդեցություն չի ակնկալվում	ԱԲԲ-ի վրա գումարային ազդեցություն չի ակնկալվում	<i>Նախատեսված ծրագրերի իրականացման արդյունքում ակնկալվում է զգալի գումարային դրական ազդեցություն ճանապարհների օգտագործողների համար շրջանի ճանապարհային հաղորդակցության և անվտանգության տեսանկյունից:</i>
<b>Ծրագրում ներգրավված աշխատողներ</b> 1. Օդի աղտոտման և աղմուկի բարձր մակարդակների ազդեցությանը ենթարկվելը	Ակնկալվում է, որ էլեկտրահաղորդման գծերի և Ծրագրի ճանապարհի հետ կապված՝ աշխատողների առողջության և աշխատանքային անվտանգության ռիսկերը կկառավարվեն ՄՖՀ-երի ստանդարտների համաձայն: Տարբեր տեղամասերում ակնկալվում են օդի հետ կապված և աղմուկի մակարդակի անտեսվող գումարային ազդեցություններ ծրագրում ներգրավված աշխատողների վրա, քանի որ	Չի ակնկալվում, որ կառուցման աշխատանքները տարածականորեն միմյանց կփոխձանձկեն՝ բացառությամբ մայրուղու հետ միացման կետում իրականացվողների: Քանի որ կառուցման ընթացքը կառավարվելու է աշխատողների առողջության և աշխատանքի անվտանգության ստանդարտներին համապատասխան, ԱԲԲ –ի վրա հավելյալ ազդեցություն չի ակնկալվում:	<i>Ողջիի պոչամբարը գտնվում է առաջարկվող ճանապարհի հարավային կողմում: Ճանապարհի շինարարության հողային հանույթն օգտագործվելու է տարածքի վերականգնման համար: Ենթադրվում է, որ աշխատանքները կհամակարգվեն այնպես, որ աշխատողների վրա թույլատրելի մակարդակներից բարձր ազդեցությունները բացառվեն: Փխրուլթի պոչամբարը գտնվում է ճանապարհից մոտավորապես 1 կմ հեռու, ուստի նույնիսկ զուգահեռ (միաժամանակյա) աշխատանքների դեպքում ծրագրում ներգրավված աշխատողների վրա միասնական</i>	Ծրագրում ներգրավված աշխատողները կարող են ենթարկվել օդի աղտոտման և աղմուկի մակարդակի հավելյալ ազդեցությունների, եթե երկու ծրագրերի իրականացումը ժամանակով համընկնի, քանի որ հավանական է, որ դրանք տարածականորեն միմյանց մոտ են գտնվում:	<i>Գեղիի տարածքում առկա է աշխատողների՝ օդի աղտոտման և աղմուկի մակարդակների ազդեցության ենթարկման փոքրից մինչև չափավոր կարճաժամկետ ռիսկ միաժամանակ իրականացվող երկու ծրագրերի</i>



ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիկ և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՄԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
	գործունեություններն ու դրանց հետ կապված ազդեցությունները խիստ տեղայնացված են		ազդեցություններ չեն ակնկալվում: Այս ԱԲԲ-ի վրա գումարային ազդեցություն չի ակնկալվում:		շինարարական աշխատանքների պատճառով:
2. Աշխատողների անվտանգության ռիսկեր՝ կապված տեղական ճանապարհային երթևեկության հետ	Ծրագրում ներգրավված աշխատողների՝ շինարարական տեղամասեր ամենօրյա այցերի ժամանակ ճանապարհատրանսպորտային վթարների (պատահարների) հետ կապված վնասվածքներ ստանալու ռիսկը հարաբերակցության մեջ է ճանապարհներին հայտնված տրանսպորտային միջոցների թվի, եղանակային պայմանների, ճանապարհներ օգտագործող այլ կողմերի վարքագծի և շատ այլ գործոնների հետ: Այնուամենայնիվ, չի ակնկալվում, որ գումարային ռիսկը կգերազանցի Ծրագրի մնացորդային ռիսկի մակարդակը (փոքր), քանի որ բոլոր ծրագրերը պետք է որ բավարարեն ճանապարհային անվտանգության պահանջները, ինչպես նաև Ծրագրի անձնակազմից ցանկացածը, ով վարելու է տրանսպորտային միջոց, կանցնի համապատասխան մասնագիտական վերապատրաստում:				Կանխատեսվում է աշխատողների անվտանգության գումարային փոքր ռիսկ կառուցման փուլում Ծրագրի և ընթացքի մեջ գտնվող այլ ծրագրերի պատճառով:
<b>Կենսա-բազմա-զանություն</b> 1. Ազդեցություններ տեսակների բնական կենսամիջավայրերի վրա Կրիտիկական Կենսամիջավայրերի / ԿԱՀ-երի և դրանցից այն կողմ	Ծրագրի և էլեկտրահաղորդման գծերի կառուցման ընթացքում հնարավոր է գումարային ազդեցություն Կրիտիկական Կենսամիջավայրերի և ԿԱՀ-ի վրա, մասնավորապես կենսամիջավայրերի խախտում: Չի ակնկալվում, որ այդ ազդեցությունը կգերազանցի Ծրագրի մնացորդային մակարդակները (անտեսվողից մինչև չափավոր՝ կախված ընկալիչից): Էլեկտրահաղորդման գծերի անցկացման ուղին ընտրելիս հանձնարարված է խուսափել Կրիտիկական Կենսամիջավայրերից, և եթե դրանք պարզապես հնարավոր չլինի շրջանցել, ապա էլեկտրահաղորդման գործող գծերը թռչունների էլեկտրահարման ու նրանց հետ բախման հավելյալ	Ճնապարհի այս հատվածի կառուցման ժամանակ հնարավոր է ազդեցություն միևնույն կրիտիկական տեսակների, կենսամիջավայրերի և ԿԱՀ-ի վրա: Սակայն նախատեսվում է նաև, որ այս գործունեությունը համապատասխանելու է վարկատուների և միջազգային ԲՆՍ ստանդարտների պահանջներին: Հետևաբար, սահմանված ցանկացած Կրիտիկական Կենսամիջավայրերի համար ակնկալվում է համնել գերոյական կորստի, կամ եթե հնարավոր է, զուտ օգուտի կարգավիճակի, եթե դրանք շրջանցել չհաջողվի:	Կրիտիկական Կենսամիջավայր է սահմանվել Ողջիկ պոչամբարի մոտ գտնվող տարածքում, ուստի հնարավոր է գումարային ազդեցություն: Այնուամենայնիվ, այն կկառավարվի նախ հնարավորության դեպքում խուսափելու միջոցով, հետո հնարավորին չափ փոքրացնելով, իսկ հետո էլ այն չեզոքացնելով, եթե պարզվի, որ խուսափել (շրջանցել) հնարավոր չէ: Այդպիսով, ի վերջո, կապահովվի գերոյական զուտ կորուստ:	2ՊՄԿ և Գեղիի ջրամբարի միջև գտնվող տարածքում առկա է սահմանված Կրիտիկական Կենսամիջավայր : Խողովակաշարի կառուցման ընթացքում հնարավոր է գումարային ազդեցություն: Ակնկալվում է, որ կիրառվելու է մեղմացման միջոցառումների ստորակարգությունը, ուստի գումարային ազդեցությունը դիտարկվում է որպես անտեսվող:	Կրիտիկական բոլոր Կենսամիջավայրերում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ Կարկաստների կողմից ֆինանսավորվող ծրագրերը, ակնկալվում է հասնել «Կենսա-բազմազանության գերոյական զուտ կորստի», իսկ որտեղ հնարավոր է, «Կենսաբազմազանության զուտ օգուտի» կարգավիճակի: Մասնավոր հատվածը զարգացնողների կողմից կիրառվող մեղմացման միջոցառումներն աննշան

ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակոլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՍԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
	<p>ռիսկեր կառաջացնեն, չնայած ճանապարհին ինքը դրանց վրա ազդեցություններ չի ունենա: Երկու ծրագրերի համար էլ կմշակվեն և կիրականացվեն մեղմացման / չեզոքացման միջոցառումներ կենսաբազմազանության գերոյական զուտ կորստի, իսկ որտեղ հնարավոր է, զուտ օգուտի հասնելու համար:</p>				<p>կդարձնեն այդ ազդեցությունը:</p>
<p>2. Ազդեցությունները պետական արգելոցների (ազգային պարկերի), Emerald ցանցի տարածքների և ԿԿՏ-երի վրա</p>	<p>Առաջարկող ճանապարհը չի հատում ազգային հատուկ պահպանվող գոտիներ, սակայն Emerald ցանցի որոշ վայրերի մոտ է գտնվում և ընկնում է ԿԿՏ-ի մեջ: Ուստի էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցման գործունեությունը կարող է գումարային ազդեցություն ունենալ այս ԱԲԲ -ի վրա: Առաջարկվող ճանապարհի առնչությամբ կատարված համապատասխան գնահատումը ցույց է տալիս, որ Emerald ցանցի վրա ֆիզիկական ազդեցություն տեղի չի ունենա: Էլեկտրահաղորդման գծերի անցկացման ուղղությունը պետք է ընտրվի այնպես, որ մուտքն այդ տարածքներ բացառվի՝ նույն կերպ, ինչպես դա արվում է Ծրագրի կողմից: Հետևաբար գումարային ազդեցությունը կբացակայի կամ աննշան կլինի:</p>	<p>Ճանապարհի այս հատվածի կառուցումը կարող է հատում առաջացնել Մեղրիի ԿԿՏ-ի հետ, որի վրա Ծրագրի ճանապարհի կառուցումը նույնպես ազդեցություն ունի: Ծրագրի առնչությամբ կատարված համապատասխան գնահատումը ցույց է տալիս, որ Չմիուխտների ցանցի վրա միասնական ֆիզիկական ազդեցություն տեղի չի ունենա և նույնը կարելի է ակնկալել ՀՀԾՄ Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի ծրագրի համար: Հետևաբար գումարային ազդեցությունը կբացակայի կամ աննշան կլինի:</p>	<p>Պոչամբարները գտնվում են Մեղրիի ԿԿՏ-ում: Այնուամենայնիվ, վերականգնողական աշխատանքները չեն սաստկացնի հնարավոր բացասական ազդեցությունները կենսաբազմազանության վրա և ավելի շուտ կբարելավեն պոչամբարների վիճակը, քան հնարավոր ռիսկեր կստեղծեն ԿԿՏ կենսաբազմազանության համար:</p> <p><i>*Այս դաշտին բացառիկ գունավորում է տրվել՝ կապված ԱԲԲ-ի վրա հնարավոր հակադիր ազդեցությունների հետ:</i></p>	<p>Առաջարկվող ճանապարհի տարածքը գտնվում է Մեղրիի ԿԿՏ-ի ներսում: Ըստ Ծրագրի վերաբերյալ համապատասխան գնահատման եզրակացության, մեղմացման համարժեք միջոցառումների իրականացումից հետո Չանգեզուրի արգելոցի, Չանգեզուրի ԿԹՏ/ԿԿՏ-ի, Մեղրիի ԿԿՏ-ի վրա ազդեցություններ չեն ակնկալվում պահպանվող այդ տարածքների կամ կենսաբազմազանության միջազգայնորեն ընդունված տարածքների ամբողջականության տեսակետից: Խողովակաշարի կառուցման աշխատանքները կարող են առաջացնել աննշան կարճաժամկետ անբարենպաստ գումարային ազդեցություն արմուկի և օդային արտանետումների պատճառով, սակայն շահագործման հետ</p>	<p>Մինչդեռ չի ակնկալվում, որ այդ ծրագրերն ազդեցություն կունենան Պահպանվող Տարածքների վրա, կարելի է ակնկալել որոշ կարճաժամկետ անտեսվող բացասական գումարային ազդեցություն Մեղրիի ԿԿՏ-ի վրա:</p>

ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՍԿ ՓԲԸ համար	Ազդեցություններ համադրումն ԱԲԲ-ի վրա
				կապված ազդեցություններ չեն ակնկալվում:	
<p><b>Հողային պաշարներ</b> հողօգտագործում և գյուղատնտեսական գործունեություն</p>	<p>Անսշան չափով, սակայն հողի մշտական օտարման անհրաժեշտություն կառաջանա էլեկտրահաղորդման գծերի աշտարակների տեղակայման համար, ինչպես նաև հողօգտագործման / գյուղատնտեսական գործունեության համար սահմանափակումներ կդրվեն «բուֆերային» գոտիներում: Բնակավայրերի ֆիզիկական առկայության բացառումը հանդիսանում է էլեկտրահաղորդման գծերի անցկացման ուղիների ընտրության պահանջներից մեկը: Ակնկալվում է, որ գումարային ազդեցությունը չի գերազանցի Ծրագրի մնացորդային ազդեցության նշանակալիությունը՝ <b>փոքրից մինչև չափավոր:</b></p>	<p>Անհրաժեշտ կլինի ընթացքի մեջ գտնվող ծրագրի համար գույք (սեփականություն) ձեռք բերել մշտական հիմունքներով Լեռնածոր վարչական միավորի սահմաններում (և դրանից դուրս՝ դեպի Ագարակ և Մեղրի): Ծրագրի շրջանակում տարաբնակեցման պատճառով Լեռնածորի գուղական տարածքի վրա ազդեցությունը նույնպես անսշան կլինի (տես՝ Ծրագրի <b>Տարաբնակեցման շրջանակը և ՇՄՍԱԳ Հատոր 4</b>-ը): Այս գումարային ռիսկը <b>անտեսվող է</b>, որին կենթարկվեն արդեն ազդեցություններ կրող հարակից տնտեսությունները կամ սեփականությունները, որոնք պատկանում են նույն տնային տնտեսություններին: Ավելի լայն ենթատեքստում դիտարկելիս, նկատի առնելով, որ այս ծրագրի համար կարիք կլինի ունենալ իր սեփական ՀՀՏԿ-երը (ենթադրաբար առաջարկվող, որ դրանք լինեն Մեղրիի տարածքում՝ Ծրագրի հարավային եզրից մոտ 30 կմ հեռու), այս տարածքի հողային պաշարների վրա գումարային ազդեցությունը ընդհատարկվում է որպես <b>փոքրից մինչև</b></p>	<p>վերականգնման համար լրացուցիչ հողատարածքներ ձեռք չեն բերվելու: Ուստի, գումարային ազդեցություն այս ԱԲԲ -ի վրա չի ակնկալվում:</p>	<p>Խողովակաշարի կառուցման աշխատանքների հետևանքով տեղի կունենա հողի ժամանակավոր կամ մշտական օտարում և հողօգտագործման սահմանափակում, այդ թվում՝ հնարավոր ազդեցություններ գյուղատնտեսական հողերի վրա: Ակնկալվում է, որ գումարային ազդեցությունը չի գերազանցի Ծրագրի մնացորդային ազդեցության նշանակալիությունը՝ <b>փոքրից մինչև չափավոր:</b></p>	<p><i>Կանխատեսվում են անտեսվողից մինչև չափավոր գումարային ազդեցություններ հողային պաշարների, հողօգտագործման և գյուղատնտեսական գործունեության գործունեությունների վրա Գեղիի և Լեռնածորի տարածքներում, հնարավոր է նաև էլեկտրահաղորդման գծերի անվտանգության (բուֆերային) գոտիներում:</i></p>

ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՍԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
		<b>չափավոր:</b>			
Հող	<p>Առաջարկվող հաղորդման գծերի աշտարակների տեղամասերում հողային աշխատանքների կատարումը և դեպի աշտարակներ ժամանակավոր ճանապարհների կառուցումը կարող է շինարարական տեղամասերում հանգեցնել բնահողի ծածկույթի խախտման, հավանաբար նաև հողի աղտոտման՝ անզոնայում վտանգավոր նյութերի թափման կամ թափոնների հավաքման ու հեռացման վատ կազմակերպման պատճառով: Սովորաբար այս ազդեցություններն իրենց տեսակով նման են առաջարկվող ճանապարհի կառուցման ժամանակ հողի վրա ազդեցություններին, սակայն ուժգնության տեսակետից շատ ավելի աննշան են, քանի որ էլեկտրահաղորդման ուղեգծերի տարածքի ընդհանուր մակերեսը կազմելու է առաջարկվող ճանապարհագոտու փոքրիկ մասը: Շինարարական աշխատանքների ավարտից հետո էլեկտրահաղորդման գծերի կառուցման պատճառով խաթարված հողատարածքների մի մասը բնահողի ծածկույթի հետ</p>	<p>Ծրագրի ճանապարհի նման, Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի կառուցումը շինարարական տեղամասերում կարող է առաջացնել բնահողի ծածկույթի խաթարում, հնարավոր է նաև հողի աղտոտում անզոնայում վտանգավոր նյութերի թափման կամ թափոնների հավաքման ու հեռացման վատ կազմակերպման պատճառով: Քաջարան-Ագարակ ճանապարհագոտու (պաստառի) ընդհանուր մակերեսը մոտավորապես երկու անգամ փոքր է, քան Ծրագրի ճանապարհին: Եթե կիրառվեն մեղմացման համապատասխան միջոցառումներ, ապա ակնկալվում է, որ հողի վրա գումարային ազդեցությունը կլինի <b>փոքրից մինչև չափավոր:</b></p>	<p>Պոչամբարների վերականգնման համար լրացուցիչ հողատարածքներ ձեռք չեն բերվելու և չփոխակերպված հողերի խաթարում չի ակնկալվում: Ավելին, պատշաճ կերպով վերականգնված պոչամբարները կվերականգնեն նաև չաղտոտված հողի ծածկույթը և հնարավոր է օգտագործվեն որպես արոտավայրեր կամ ծառերի տնկման տարածքներ: Հետևաբար, վերականգնողական աշխատանքները ոչ թե կսաստկացնեն Ծրագրի հետ կապված հողին հասցվող բացասական ազդեցությունները, այլ ավելի շուտ դրական ազդեցություն կունենան Ծրագրի տարածաշրջանի հողի վրա:</p> <p><i>*Այս դաշտին բացառիկ գումարում է տրվել՝ կապված ԱԲԲ-ի վրա հնարավոր հակադիր ազդեցությունների հետ:</i></p>	<p>Խողովակաշարի կառուցման գործունեությունը կարող է առաջացնել հողի ծածկույթի խաթարում փորման աշխատանքների պատճառով, հնարավոր է նաև անցկացման գոտու սահմաններում հողի աղտոտում պատահաբար վտանգավոր նյութերի թափման կամ թափոնների հավաքման ու հեռացման վատ կազմակերպման հետևանքով: Հողովակաշարը կլինի ստորգետնյա, իսկ դրա անցկացման ուղու ներսում գտնվող խախտված հողը կվերականգնվի կառուցման աշխատանքների ավարտից հետո: Ուստի համարվում է, որ խողովակաշարի ազդեցությունը հողի վրա կլինի կարճաժամկետ, հետևանքների վերացման հնարավորությամբ և կունենա անտեսվող նշանակալիություն: Եթե կիրառվեն մեղմացման համապատասխան միջոցառումներ, ապա ակնկալվում է, որ հողի վրա գումարային ազդեցությունը չի գերազանցի Ծրագրի մնացորդային ազդեցության մշանակալիությունը՝ <b>փոքր:</b></p>	<p><i>Կանխատեսվում են անտեսվողից մինչև չափավոր գումարային ազդեցություններ հողի վրա՝ Գեղիի և Լեռնաձորի տարածքներում, հնարավոր է նաև էլեկտրահաղորդման գծերի անցկացման ուղեգոտու սահմաններում:</i></p>

ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՍԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
	<p>միասին կվերականգնվեն: Ուստի բնահողի անդամնալի վնասի և կորստի ենթարկվող տարածքի ընդհանուր մակերեսը շատ փոքր կլինի, հետևաբար բնահողի վրա համապատասխան ազդեցությունը դիտարկվում է որպես անտեսվող: Եթե կիրառվեն մեղմացման համապատասխան միջոցառումներ, ապա ակնկալվում է, որ հողի վրա գումարային ազդեցությունը չի գերազանցի Ծրագրի մնացորդային ազդեցության մշանակալիությունը՝ <b>փոքր:</b></p>				
<p><b>Գրունտային ջրերի պաշարներ</b></p>	<p>Ակնկալվում է, որ ԱԲԲ-ի վրա գումարային ազդեցություն տեղի չի ունենա՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ էլեկտրահաղորդման գծերը նախագծվել են գրունտային ջրերի պաշարների վրա ազդեցությունների բացառմամբ, և որ զուգահեռ ընթացող ծրագիրը համապատասխանում է ԲԼՍ վերաբերյալ ազգային կանոնակարգերին և իրականացվում է ՄՖՀ պահանջների համաձայն: Ակնկալվում է նաև, որ նախագուշակյան միջոցներ կծեռնարկվեն կոմունալ կենցաղային ջրերի, աղտոտող և այլ նյութերի պատահաբար թափվելուց խուսափելու համար:</p>	<p>Առաջարկվող ճանապարհի կառուցման պատճառով հնարավոր է ազդեցություններ առաջանան գրունտային ջրերի վրա վնասակար նյութերի, հատկապես ածխաջրածինների թափման, թունելափորման ու դրա հետ կապված ջրազրկման պատճառով գրունտային ջրերի հիդրավիկ ռեժիմի հնարավոր փոփոխման պատճառներով: Չի կարելի լրիվ վստահ լինել, որ գրունտային ջրերը չեն տարածվի ավելի ընդարձակ շրջաններ, այլ կերպ ասած՝ երկու ծրագրերի տեղամասեր: Չնայած դրան, մեղմացման շնորհիվ, ինչը նախատեսված է երկու ծրագրերում, ակնկալվում է, որ գումարային ազդեցությունն ավելի մեծ չի լինի, քան <b>փոքրը:</b></p>	<p>Պոչամբարների վերականգնումը կարող է առաջացնել գրունտային ջրերի աղտոտման ռիսկ: Այդուհանդերձ, գրունտային ջրերի վրա էական ազդեցություններ չեն ակնկալվում ճանապարհի՝ պոչամբարներին մոտ գտնվող հատվածում հողային աշխատանքների կատարման ընթացքում: Ճանապարհի կառուցման առնչությամբ զգալի ազդեցություններ կարող են լինել թունելափորման հետ կապված, սակայն առավել մոտ տեղաբաշխված Թունել (09) -ը գտնվում է պոչամբարներից մոտավորապես 4.5-5 կմ հեռու: Ուստի գումարային ազդեցությունն այս ԱԲԲ-ի վրա չի ակնկալվում:</p>	<p>Փորման աշխատանքների ժամանակ գրունտային ջրերի պաշարների վրա կարող է ազդել վնասակար նյութերի թափվելը: Նկատի առնելով տարածականորեն երկու ծրագրերի մոտ գտնվելը և ժամանակային հնարավոր փոխձածկումը, հնարավոր են գումարային ազդեցություններ: Այնուհանդերձ, նկատի առնելով երկու ծրագրերում նախատեսված մեղմացման միջոցառումները, չի ակնկալվում, որ այդպիսի գումարային ազդեցությունները այս ԱԲԲ վրա կավելացնեն Ծրագրի ռիսկի մնացորդային նշանակալիությունը՝ <b>փոքր:</b></p>	<p>Ակնկալվում է սահմանափակ գումարային ազդեցություն հիմնականում <b>Գեղիի տարածքում:</b></p>

ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՍԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
<p><b>Հանրային ենթակառուցվածք</b> Առողջապահական հիմնարկներ</p>	<p>Ծրագրի տարածաշրջանում գոյություն ունեցող առողջապահական ենթակառուցվածքը (հատկապես Քաջարանի Բժշկական Կենտրոնը, որը նախատեսվող գործունեությունների տարածքներին առավել մոտ է գտնվում) կարող է առերեսվել բժշկական ծառայությունների լրացուցիչ պահանջարկի հետ՝ կապված բոլոր այդ ծրագրերի աշխատողների սպասարկման անհրաժեշտության հետ: Այնուամենայնիվ, գումարային ազդեցությունն էականորեն չի ավելացնի Ծրագրի ազդեցությունների համար արված կանխատեսումների մակարդակը՝ չափավոր նշանակալիություն:</p>			<p>Տարածքում հնարավոր են գումարային ազդեցություններ առողջապահական (բժշկական) հիմնարկների վրա</p>	
<p><b>Լանդշաֆտ (տեղանք)</b></p>	<p>Ծրագրի կարիքների համար էլեկտրահաղորդման գծերի տեղակայումը կարող է ազդեցություն ունենալ լանդշաֆտի (տեղանքի) վրա: Սակայն տեղանքի տեսքի պատկերի վրա հենց իր՝ Ծրագրի ազդեցությունը համարվում է շատ ավելի մեծ, ուստի գումարային ազդեցությունը չի գերազանցի Ծրագրի մնացորդային նշանակալիությունը (հակադիր / անբարենպաստ չափավոր): Ի հավելումս, այդ գծերը կարող են անցկացվել խելամտորեն, որպեսզի նվազեցվեն հնարավոր տեսողական ազդեցությունները:</p>	<p>Քաջարան-Ագարակ ճանապարհը սկսվում է Լեռնաձորի մոտ՝ Մ2 ճանապարհից, շրջանցելով բնակավայրը: Ծրագրի ճանապարհը գտնվում է այդ կետից դեպի արևմուտք և Մ2-ին միանում է Լեռնաձորից 1 կմ հեռավորության վրա : Փաստորեն, ծրագրերի միջև տարածական հեռավորության շնորհիվ գումարային ազդեցություն այս ԱԲԲ-ի վրա չի ակնկալվում (չնայած դրանցից յուրաքանչյուրը կարող է առաջացնել փոքրից մինչև չափավոր բացասական ազդեցություններ):</p>	<p>Պոչամբարների վերականգնումը լանդշաֆտի վրա կունենա փոքր դրական ազդեցություններ տարածքը արդյունաբերականից բնականի վերածման շնորհիվ: Այդուհանդերձ, այն չի մեղմացնի տեսողական այն ազդեցությունները (հակադիր / անբարենպաստ չափավոր), որոնք ճանապարհի կառուցման պատճառով մեծամասամբ առաջանում են այլ տեղամասերում*  * Այս դաշտին բացառիկ գունավորում է տրվել՝ կապված ԱԲԲ –ի վրա հնարավոր հակադիր ազդեցությունների հետ.</p>	<p>ԱԲԲ-ի վրա գումարային ազդեցություն չի ակնկալվում:</p>	<p>Կանխատեսվում է, որ էլեկտրահաղորդման գծերը և Ծրագիրը միասին վերցրած կառաջացնեն բացասական գումարային ազդեցություններ, մինչդեռ պոչամբարների վերականգնումը դրական առումով կվերափոխի լանդշաֆտը (տեղանքը):</p>
<p><b>Մշակութային ժառանգություն</b> 1. Նյութական մշակութային ժառանգություն</p>	<p>Էլեկտրահաղորդման գծերի անցկացման ուղին կշրջանցի մշակութային ժառանգության հայտնի հուշարձանները, կընդարձակվեն հնագիտական դաշտային հետազոտությունները: Պատմամշակութային հարուստ ժառանգության առկայության պայմաններում հնարավոր է, որ այս գործունեության (օրինակ՝ բնահողի կտրման հանման) ժամանակ դեռևս անհայտ</p>	<p>Ճանապարհի կառուցումն առաջացնում է մշակութային ժառանգության օբյեկտներին ֆիզիկական վնաս հասցնելու ռիսկ: Երկու ծրագրերի տարածքայնության փաստը մեծացնում է վտանգվող մշակութային ժառանգության հնարավոր օբյեկտների թիվը: Ակնկալվում է, որ գումարային ազդեցությունը չի գերազանցի Ծրագրի մնացորդային նշանակալիությունը (փոքր), քանի որ այս</p>	<p>Գումարային ազդեցություն ԱԲԲ-ի վրա չի ակնկալվում, քանի որ արդեն փոխակերպված տարածքներից այն կողմ բնահողի խախտում տեղի չունի:</p>	<p>Առկա են մշակութային ժառանգության երկու օբյեկտ (թիվ 75 և թիվ 76), որոնք կարող են հայտնվել խողովակաշարի հնարավոր (ներկայումս նախագծվող) ուղեգծին բավականին մոտ: Ակնկալվում է, որ գումարային ազդեցությունը չի գերազանցի մնացորդային ռիսկի նշանակալիությունը (փոքր), եթե խողովակաշարն անցկացվի պատմամշակութային</p>	<p>Հնարավոր են բացասական գումարային ազդեցություններ կրթական մշակութային ժառանգության վրա՝ Չեղիի տարածքում, իսկ ավելի լայն առումով՝ էլեկտրահաղորդման գծերի և Քաջարան-</p>



ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՍԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
	<p>օբյեկտներ ենթարկվեն անմիջական և/կամ անուղղակի կորստյան կամ վնասման: Ծրագրի հետ կապված՝ մշակութային ժառանգության վրա ազդեցությունների (ՇՄՍԱԳ Հատոր 4) հաղթահարման նպատակով յուրաքանչյուր նման տեղամասի համար մշակվել են մեղմացման միջոցառումներ, կկիրառվի նաև գործողությունների կարգ մշակութային արժեք ներկայացնող գտածոի հայտնաբերման դեպքում: Ակնկալվում է, որ նման միջոցներ կծեռնարկվեն էլեկտրահաղորդման գծերի անցկացման համար: Հետևաբար, փոքրը գերազանցող գումարային ազդեցություններ չպետք է ակնկալվեն:</p>	<p>ճանապարհահատվածի համար նույնպես առկա են լինելու պատմամշակութային ժառանգության մեղմացման համապատասխան միջոցառումներ և գործողությունների կարգ մշակութային արժեք ներկայացնող գտածոի հայտնաբերման դեպքում:</p>		<p>Ժառանգության օբյեկտներից հետո և կիրառվի գործողությունների կարգը մշակութային արժեք ներկայացնող գտածոի հայտնաբերման դեպքում:</p>	<p>Ագարակ հատվածի երկայնքով:</p>
<p>2. Ոչ նյութական մշակութային ժառանգություն</p>	<p>ԱԲԲ-ի վրա գումարային ազդեցություն չի ակնկալվում</p>	<p>Կանխատեսվում է անուղղակի դրական ազդեցություն տեղական ավանդույթների, սովորույթների և ծիսակարգերի պահպանմամբ՝ շրջանի ավտոճանապարհների հետ հուսալի կապի ապահովման միջոցով ՓՄՁ-երի և զբոսաշրջային գործունեությունը գրավիչ դարձնելու շնորհիվ (ավելացնելով Ծրագրի համանման՝ փոքրից մինչև չափավոր հնարավորությունները):</p>	<p>ԱԲԲ-ի վրա գումարային ազդեցություն չի ակնկալվում</p>	<p>ԱԲԲ-ի վրա գումարային ազդեցություն չի ակնկալվում</p>	<p>Կանխատեսվում է ոչ նյութական մշակութային ժառանգության առանձնահատկությունների վերականգնման հնարավոր գումարային աջակցություն Հյուսիս-Հարավ Միջանցքի նախաձեռնության շնորհիվ:</p>
<p>Զբաղվածություն և աշխատաշուկաներ</p>	<p>Այս գործունեությունից աննշան հավելյալ դրական ազդեցություններ կարելի է</p>	<p>Ակնկալվում է, որ Քաջարան-Ագարակ ճանապարհի կառուցումն աշխատանքի</p>	<p>ԱԲԲ -ի վրա գումարային ազդեցություն չի ակնկալվում (կամ այնքան ցածր է, որ չի դիտարկվում):</p>	<p>Այս գործունեությունից աննշան հավելյալ դրական ազդեցություններ կարելի է</p>	<p>Ակնկալվում է, որ նախատեսվող գործունեություն-</p>



ԱԲԲ-ներ	Նախագծի կարիքների համար Էլեկտրահաղորդման լրացուցիչ գծերի կառուցում	Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի Քաջարան - Ագարակ հատվածի ծրագիր	Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնում / վերակուլտիվացիա	Արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցում 2ՊՍԿ ՓԲԸ համար	Ազդեցությունների համադրումն ԱԲԲ-ի վրա
Մուկիցիպալ և տեղական մակարդակ	ակնկալել՝ նկատի առնելով միևնույն տեղերում ուղղակի, անուղղակի և որպես արդյունք առաջացող աշխատատեղերը: Այն կավելացնի աշխատանքի շուկաների վրա Ծրագրի՝ իրենք իրենցով չափավոր դրական կանխատեսվող ազդեցությունները, սակայն չի փոփոխի դրանց գումարային ազդեցության ընդհանուր նշանակալիությունը:	շուկաներում կառաջացնի թափուր տեղերի ավելացում, համայնքների և ընդհանուր շրջանի համար ստեղծելով աշխատանքով ապահովման համար ավելի լայն շրջանակներ: Այն պարզապես կավելացնի ակնկալվող ուղղակի, անուղղակի և որպես արդյունք առաջացող աշխատատեղերը, որոնք կստեղծվեն Ծրագրի շրջանակներում:		ակնկալել՝ նկատի առնելով միևնույն տեղերում ուղղակի, անուղղակի և որպես արդյունք առաջացող աշխատատեղերը: Աշխատաշուկաների վրա Ծրագրի՝ իրենք իրենցով չափավոր դրական կանխատեսվող ազդեցությունները կլրացվեն, սակայն դրանց գումարային ազդեցության ընդհանուր նշանակալիությունը չի փոփոխվի:	ների դրական գումարային ազդեցությունները մուկիցիպալ և տեղական մակարդակով աշխատանքի շուկաների վրա կմիավորվեն, քանի որ բոլորն էլ կստեղծեն աշխատատեղեր շինարարության և շահագործման ոլորտներում:
<b>Տնտեսություն Տարածաշրջանային և մուկիցիպալ (տեղական ինքնակառավարման) մակարդակ</b>	Այս գործունեությունը կավելացնի ազդեցությունը պետական բյուջե վճարվելիք հարկերի և գնումների իրականացման ոլորտում առաջացող հնարավորությունների շնորհիվ: Այս հավելյալ ազդեցությունը Էականորեն չի մեծացնի տնտեսության վրա Ծրագրի՝ փոքրից մինչև չափավոր դրական ազդեցությունը: Գումարային ազդեցությունը կմնա նշանակալիության տույն մակարդակի վրա:	Ճանապարհի այս հատվածի կառուցման ավարտը լրացուցիչ հիվճե կհանդիսանա տարածաշրջանում զբոսաշրջության և առևտրի զարգացման համար:	ԱԲԲ-ի շրջանակում գումարային ազդեցություն չի ակնկալվում (կամ այնքան ցածր է, որ չի դիտարկվում):	Այս գործունեությունը կավելացնի ազդեցությունը պետական բյուջե վճարվելիք հարկերի և գնումների իրականացման ոլորտում առաջացող հնարավորությունների շնորհիվ: Գործունեությունը կօժանդակի ինքնակառավարման տարածքում խոշոր գործատու և հարկատու հանդիսացող ընկերության գործառնություններին: Ընդհանուր առմամբ, գումարային ազդեցությունն Էականորեն չի ավելացնի տնտեսության վրա Ծրագրի՝ փոքրից մինչև չափավոր դրական ազդեցությունը:	Ակնկալվում է, որ նախատեսվող բոլոր գործունեությունների դրական գումարային ազդեցությունները մուկիցիպալ և տեղական մակարդակով տնտեսության վրա կմիավորվեն՝ կապված պետական բյուջե վճարվելիք հարկերի, գնումների ոլորտում հնարավորությունների և ՓՄՁ-երի խթանման (զարգացման) հետ:

**2.5 Փուլ 6` Գումարային ազդեցությունների կառավարում**

Հնարավոր գումարային ազդեցությունները ԱԲԲ-երի վրա միայն աննշան են փոփոխում (ավելացնում կամ պակասեցնում) Ծրագրի ազդեցությունների մնացորդային նշանակալիությունը, այսինքն ԱԲԲ-երի մեծամասնության գումարային ազդեցությունը գնահատելիս ստացվում է նույն նշանակալիությունը, ինչպիսին Ծրագրին է միայնակ կերպով: **ԳԱԳ –ը չպարզեց որևէ զգալի բացասական գումարային ազդեցություն:**

Ազդեցությունների կանխարգելման, մեղմացման և / կամ ամրապնդման միջոցառումներ, որոնք ցուցվում են ՃԴ կողմից կատարման համար

- Ակտիվորեն գործակցել ՉՊՄԿ ՓԲԸ հետ Գեղիի տարածքում կառուցվելիք իրենց օբյեկտների` նախատեսվող ճանապարհի հետ հնարավոր տարածական փոխձածկման վերաբերյալ:
- Սույն ԳԱԳ-ում դիտարկված միաժամանակ (զուգահեռ) ընթացող ծրագրերի կառուցապատողներին տեղեկացնել, այն է.
  - Ծրագրի կարիքների համար էլեկտրահաղորդման գծերի կառուցման մասին,
  - ԳՅԾՄ Բաջարան-Ագարակ հատվածի մասին,
  - Ողջիի և Փխրուբի պոչամբարների վերականգնման / ռեկուլտիվացիվացման մասին,
  - ՉՊՄԿ ՓԲԸ համար արդյունաբերական ջրամատակարարման համակարգի կառուցման մասին:

Ծրագրի ճանապարհի կառուցման աշխատանքների պլանների / ժամանակացույցերի մասին, այդպիսով հնարավորություն տալով կատարել փոխադարձ կարգավորումներ տեղական համայնքների և աշխատողների վրա օդի և աղմուկի հավելյալ ազդեցություններից խուսափելու կամ դրանց մակարդակը նվազագույնի հասցնելու նպատակով: Միաժամանակ տեղի ունենալիք գործունեությունների հնարավոր տարածքները, որոնց հետ կապված պահանջվում են քննարկում և համակարգում, հետևյալն են.

- Գեղիի տարածքը (աշխատանքները Ծրագրի կառուցման տեղամասերում և աշխատանքները Գեղիի ջրամբարից սկսվող` ՉՊՄԿ ՓԲԸ խողովակաշարի ուղեգծում),
- Լեռնաձոր բնակավայրի արևմտյան մասը (տները Լեռնաձորի արևմտյան եզրագոտու երկայնքով, որը գտնվում է Մ2-ից Փխրուտի պոչամբար տանող ճանապարհին մոտ), և
- Սիսիանի և Բաջարանի համայնքներում նախատեսված և / կամ միաժամանակ (զուգահեռ) իրականացվելիք ծրագրերի շրջանակում շինարարական տրանսպորտային միջոցների կողմից օգտագործվելիք ուղիների երկայնքով տեղաբաշխված բնակավայրերը:
- Ծրագրի սպասարկման համար նախատեսված էլեկտրահաղորդման գծերի նախագծողներին ցուցումներ տալ այդ գծերի անցկացման ուղիներն ընտրել այնպես, որ խուսափեն պահպանվող տարածքներից, ԿԿՏ / ԿԹՏ-երից և Emerald ցանցի տարածքներից, իսկ աշտարակների տեղերը որոշելիս նկատի առնեն գրունտային ջրերի մակարդակները:
- Տրանսպորտային երթևեկության ծանրաբեռնվածությունը հավասարակշռելու նպատակով շինարարական նյութերի, սարքավորումների և աշխատողների փոխադրումն օպտիմալացնելիս և Ծրագրի շինարարության հետ կապված ճանապարհային երթևեկության կառավարման պլանը մշակելիս նախատեսել «ելակետային» ավելի բարձր տրանսպորտային բեռնվածություններ, որոնք

կարող են առաջանալ սույն ԳԱԳ-ում ներառված գույքահեռ ընթացող ծրագրերի (որտեղ ծրագրերի իրականացումը ժամանակով համընկնում է) պատճառով:

- Պահանջել, որ շինարարության մասով կապալառուն հստակ կերպով նշի Ծրագրի շինարարական տեղամասերի սահմանները և իրականացնի անվտանգության ապահովման միջոցառումներ այդ տեղերում չթուլյալորված / պատահական մուտքը բացառելու համար:
- Պահանջել, որ Շին. կապալառուն տարածքի նախապատրաստման / փորման աշխատանքների կատարման ժամանակ ապահովի հողային հանույթի (հողի բերրի շերտի) պատշաճ պահպանումը և միջոցառումներ իրականացնի անզգուշության պատճառով վնասակար նյութերի թափումը և թափոնների հավաքման ու հեռացման վատ կազմակերպումը բացառելու համար (մանրամասն շարադրված է Թափոնների Կառավարման Պլանում, Վնասական Նյութերի Կառավարման Պլանում և Թափման Դեպքում Իրականացվող Գործողությունների Պլանում)՝ հողերին Ծրագրի կառուցման տեղամասերում սպառնացող հնարավոր ռիսկերի հսկման նպատակով:
- Պահանջել, որ Շին. կապալառուն, եթե անհրաժեշտ է, այլ ծրագրերի ընթացքի հետ շինարարական աշխատանքների ժամանակային համընկնումների դեպքում ԱԱ ռիսկերի գնահատման մեջ (որը Ծրագրի ԲևՍ կառավարման համակարգի մաս է հանդիսանում) ներառի այդ համընկնումների ԱԱ ռիսկերը:
- Մեղմացնել գումարային ազդեցությունները կենսաբազմազանության վրա, նախ փորձելով խուսափել կենսաբազմազանության վրա ազդելուց, և միայն այն դեպքում, երբ ազդեցությունից խուսափել հնարավոր չէ, չեզոքացման կամ լրացուցիչ բնապահպանական գործողությունների միջոցով իրականացնել լրացուցիչ միջոցառումներ «0-ական զուտ կորստի», իսկ որտեղ հնարավոր է, «զուտ օգուտի» հասնելու համար:
- Պահանջել, որ Շին. կապալառուն խուսափի Ծրագրի գործունեության և/կամ տեղական համայնքների հաղորդակցությունների համար մերձատար նոր ուղիներ (ճանապարհներ) ստեղծելուց: Կենսաբազմազանության վրա ազդեցություններն առավելագույն չափով նվազեցնելու նպատակով օգտագործման համար առաջնահերթությունը պետք է տրվի գոյություն ունեցող մերձատար ճանապարհներին:

Մեղմացման և բարելավման այս միջոցառումներն առաջադրվել են՝ ներառվելով Ծրագրի Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանում (ԲՍԿՊ) (ՇՄՍԱԳ Հատոր 6): Ծրագրի Իրականացման մարմինը՝ Ճանապարհային Դեպարտամենտն ընդհանուր պատասխանատվություն է կրում դրանց իրականացման համար: